**Խմբագիր՝** Արթուր Սաքունց

**Խմբագրակազմ՝** Հայկուհի Հարությունյան
Էդգար Խաչատրյան

**Նկարները՝** Արտակ Օհանյան

# ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

հեռ. +374 322 4 22 68

Էլ. հասցե՝ hcav@hcav.am;
asakunts@hcav.am
http://www.hcav.am

Սույն գրքույկը հրատարակվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Բաց հասարակության Ինստիտուտի Աջակցության հիմնադրամի եվ Համաշխարհային բանկի Երեւանի գրասենյակի կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցներով իրականացված «Մեկուսացված քաղաքակրթություն» ծրագրի շրջանակներում:



# ԿԱ ԱՐԴՅՈՔ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս հարցը ձևակերպվեց «Մեկուսացված քաղաքակրթություն» ծրագրի ընթացքում: 1988թ երկրաշարժից հետո աղետի գոտում տեղակայված բնակավայրերում ձևավորվեց նոր հասկացություն՝ տնակային ավան: Տնակներում հայտնվեցին մարդիկ, որոնց մի մասի բնակարանները քանդվել էին երկրաշարժից, մի մասինը համարվում էր վթարային և զգալի մասն էլ, վախենալով բնակվել է բնակարաններում, ապաստանեցին տնակում: Բնակարանների շինարարություններին զուգընթաց տնակային ավանի բնակիչների մի մասը, որպես փոխհատուցում ստացավ նոր բնակարաններ: Սրանք հիմնականում այն բնակիչներն էին, որոնց բնակարանները քանդվել էր երկրաշարժից կամ այն աստիճանի վթարային էր, որ ենթակա էր քանդման: Թվում էր, թե կառուցվող բնակարաններին զուգընթաց պետք է նվազեր տնակներում բնակվող բնակիչների թիվը: Որոշ իմաստով, իհարկե, այդպես էլ պատահեց, սակայն զուգահեռ ընթացավ մեկ այլ պրոցես՝ տնակային ավանը թարմացվում էր նոր մարդկանցով: Ըստ էության, տնակները դարձան համայնքային կյանքի բաղկացուցիչ մասը, իրենց տնտեսական, սոցիալական, կենցաղային խնդիրների առանձնահատկություններով: Ձևավորվեց նույնիսկ նոր հասկացություն՝ տնակային ավանի բնակիչ, որը հաճախ որակվում էր ավելի շատ բացասական գնահատականներով: Իհարկե, մեր կյանքի, մեր նորօրյա կյանքի որոշ բացասական երևույթներ չէր կարող չդրսևորվել տնակային ավաններում: Ցավոք, տնակային ավանը օազիս չէր, որպեսզի զերծ մնար այդպիսի երևույթներից, բայց չէ որ նման երևույթները բնորոշ են մեր կյանքին և դրսևորվում են ամենուր, այդ թվում և բազմաբնակարան շենքերում: Նույնիսկ ծիծաղելի է նման տարբերակումը, ըստ մարդու բնակարանի պայմանների: Ինչևէ, նման տարբերակված մոտեցումը նույնպես մեր իրականությունը, մտածելակերպը բնութագրող գործն է: Տնակային ավաններում բնակիչների հայտնվելու պատճառների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բնակիչների զգալի մասը հայտնվել է տնակում սոցիալական, առողջապահական, կրթական, տնտեսական բնույթի խնդիրների լուծման նպատակով բնակարանները վաճառելու հետևանքով: Այսինքն՝ տնակային ավանները հանդիսացել են անցումային ժամանակաշրջանին բնորոշ խնդիրները լուծել չկարողացած քաղաքացիների համար բնակվելու հնարավորություն, տանիք ունենալու հնարավորություն:

Ծրագրի իրականացման ընթացքում բազմաթիվ քննարկումները, որոնք նպատակ ունեին նպաստելու տնակային ավանների բնակիչների մասնակցությանը իրենց խնդիրների լուծման գործում, բացահայտեցին մի պարզ խնդիր՝ ՀՀ Կառավարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները չունեն որևէ ծրագիր կամ մոտեցում օբևան չունեցող քաքաքացիների նվազագույն բնակարանային պայմանների ապահովման համար: Կառավարության միակ որոշումը և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված միակ օրենքը, որը վերաբերում է տնակային ավանում բնակվող մարդկանց, որոնք երկրաշարժից չեն կորցրել բնակարանը, ուղղված է ոչ թե նրանց օթևանով ապահովելու խնդիրների լուծմանը, այլ տնակներով զբաղեցրած տարածքները ազատելուն: Այսինքն՝ ցանկացած գործողություն, որը կիրականացվի տնակային ավանների բնակիչների բնակարանային խնդիրների լուծմանը՝ տեղափոխում հանրակացարան, բնակարանի վարձակալություն, տնակը այլ տնակային ավան տեղափոխում, արմատական լուծում չի տալիս խնդրին: Սա է ծրագրի իրականացման ընթացքում բացահայտված և ձևակերպված կարևորագույն խնդիրը: Հուսով ենք, որ շահագրգիռ կազմակերպությունները և կառույցները ուշադրություն կդարձնեն այս խնդրին:



# ԳԼՈՒԽ 1
# ԱՂԵՏԻ ԳՈՏԻ, ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

## ՄԱՍ 1

### ԻՆՉՈՒ՞ ԷՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾՐԱԳԻՐԸ

1988 թվականի աղետալի երկրաշարժի մասին հանրակրթական 6-րդ դասարանի աշակերտների մեծ մասը կարդում է պատմության դասագրքում, մյուս մասն էլ աղետը համարում է իր՝ ամեն օր մետաղյա տնակում արթնանալու պատճառը:

Մինչև...

1988թ.ից երկրաշարժից հետո շրջանառության մեջ դրվեց աղետի գոտի հասկացությունը:

Դեռևս խորհրդային տարիներին իշխանության որոշումները նախատեսեցին միութենական հանրապետությունների ուժերով 1989-1991թթ ընթացքում վերականգնել աղետի գոտին:

Նախատեսված աշխատանքները նշված ժամանակահատվածում չիրականացվեցին ամբողջ ծավալով: Փլուզվեց ԽՍՀՄ-ը, և նորանկախ Հայաստանի Հանրապետությունը ժառանգեց շուրջ 4700 անավարտ օբյեկտ, որոնցից 3800-ը անավարտ շինարարությամբ բնակելի տներ էին:

1991թ-ին արդեն այդ ամբողջ աշխատանքների իրականացման պատասխանատվությունը մնաց Հայաստանի Հանրապետությանը:

ՀՀ Կառավարությունը 1994թ. հոկտեմբերի 7-ի որոշմամբ հաստատեց աղետի գոտու վերականգնման նոր ծրագիրը, որով ճշտվեցին իրականացվող աշխատանքների ծավալները, և աղետի գոտու վերականգնման ժամկետը երկարաձգվեց մինչև 2000թ.: Երկրաշարժից 10 տարի անց իրականացված աշխատանքների վերլուծությունը, ստիպեց ճշտումներ մտցնել աղետի գոտու վերականգնման քաղաքականության մեջ: ՀՀ Կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի նոր որոշմամբ սահմանվեցին անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովման պետության պարտականության իրականացման ուղիները: Այս որոշմամբ էր, որ առաջին անգամ ներդրվեց բնակարանների գնման վկայականների տրամադրման գաղափարը:

Մինչև 2000 թվականը ֆինանսական բոլոր տիպի ներդրումների՝ պետական բյուջետային և արտաբյուջետային, շնորհիվ աղետի գոտու բնակավայրերում շահագործման հանձնվեցին 3.5 մլն. քառ. մ ընդհանուր մակերեսով բնակելի տներ:

2000թ հոկտեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Աղետի գոտու վերականգնման մասին» օրենքը: Այս օրենքի դրույթներով աղետի գոտի էին համարվում Հայաստանի Հանրապետության այն տարածքները, որոնցում տեղաբաշխված բնակելի, արտադրական, սոցիալական, պատմամշակութային, կոմունալ եւ այլ նշանակության օբյեկտներն ու ենթակառուցվածքները, որոնք տուժել են 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետեւանքով: Լոռու մարզն ընդգրկվեց այդ ցուցակում:

Օրենքի հիման վրա ՀՀ Քաղաքաշինության նախարարության, Շիրակի, Լոռու, Տավուշի և Արագածոտնի մարզպետարանների մասնակցությամբ մշակվեց «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիր»:

**Ծրագրի հիմնական նպատակն էր.**

- ձևավորել աղետի գոտու վերականգնման պետական քաղաքականության հիմնական սկզբունքները
- երկրաշարժից տուժած բնակավայրերում ստեղծել բնակության համար պիտանի պայմաններ:

Ծրագիրն իր մեջ ընդգրկում էր համակողմանի ուսումնասիրություն՝ անհրաժեշտ աշխատանքների, ծախսերի, ներդրումների, աղետի գոտի համարվող յուրաքանչյուր բնակավայրերում բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը:

Ամբողջ ծրագրի աշխատանքների համար անհրաժեշտ էր 79 մլրդ դրամ: Այս հաշվարկն իր մեջ ներառում և ենթադրում էր ՀՀ պետական բյուջեի, ԱՄՆ-ի կառավարության կողմից տրամադրվող «Հայաստան», «Լինսի» հիմնադրամի միջոցները:

Իրականացված ուսումնասիրությունների գնահատմամբ՝ 2001թ. դրությամբ Վանաձորում անհրաժեշտ էր իրականացնել 12925,3 մլն դրամի աշխատանք: Այս կարգի ներդրման շնորհիվ հնարավոր կլիներ բնակարանով ապահովել Վանաձորում բնակարանի կարիք ունեցող 1662 ընտանիքի:

Ծրագրով բնակարանի կարիքավորների ցուցակում առաջին անգամ ներառնվել էին ոչ աղետի հետևանքով մշտական բնակության վայր չունեցող ընտանիքները: Ուսումնասիրության տվյալներով՝ Վանաձորում հաշվառված էին ոչ աղետի հետևանքով մշտական բնակության վայր չունեցող 550 ընտանիք:

Ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած, մշտական բնակության վայր չունեցող, մինչև «Աղետի գոտու համալիր ծրագիրը հաստատելու մասին» օրենքի ընդունումը տնակներում բնակվող ընտանիք-







ների խնդիրները պետք է լուծվեին այդ բնակիչների գրավոր համաձայնությամբ: Նրանց անհրաժեշտ էր ցուցաբերել տարբերակված մոտեցում.

- ժամանակավոր կացարանների տրամադրում
- տնակների տեղափոխում
- երկու տարով բնակարանների վարձակալության համար օժանդակության ցուցաբերում:

Նախատեսվում էր այդ բնակիչների բնակարանային պայմանների բարելավման հարցը համալիր ծրագրի իրականացման նպատակով դիտարկել 2003թ. Պետական բյուջեի քննարկման ժամանակ:

2006թ-ի տվյալներով` Վանաձորում առկա են Վանաձորի Քիմիագործների թաղամասի թիվ 1, 2, 3, 4, 7 տնակային ավանները, Լենինգրադյան թաղամասի տնակային ավանը, և ընդհանուր առմամբ Վանաձորում դեռևս մոտ 746 ընտանիք ապրում է տնակում և տնակային ավաններում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ ընտանիքները տնակում ապրում են տարբեր պատճառներով:

- Ընտանիքներ, որոնք մինչև երկրաշարժը բնակարան չեն ունեցել
- ընտանիքներ, որոնք բնակարանը կորցրել են աղետի հետևանքով, ընդգրկվել բնակարանի ստացման հերթացուցակում, սակայն մինչ այժմ բնակարան չեն ստացել
- ընտանիքներ, որոնք վաճառել են իրենց բնակարանը
- ընտանիքներ, որոնք փոփոխել են իրենց բնակության վայրը:

Ներկայումս թե՛ ՀՀ Կառավարության, թե՛ համայնքապետարանի կողմից այդ ընտանիքների բնակարանային խնդրի լուծման համալիր ծրագիր գոյություն չունի: ՀՀ Կառավարության կամ Ազգային Ժողովի կողմից այդ ընտանիքների բնակարանային խնդրի լուծման ուղղությամբ մինչ օրս ոչ մի քայլ չի իրականացվել:

Կառավարության կողմից պետական բյուջեի և օտարերկրյա միջոցներով նախատեսումների օգտագործման արդյունքները չեն խոսում այդ ուղղությամբ ձեռնարկված որևէ միջոցառման մասին: Ժամանակավոր շինություններում ապրող ընտանիքների թիվը մնացել է գրեթե անփոփոխ, իսկ տնակներն էլ դեռևս ընկալվում են որպես աղետի հետևանք:



## ՏՆԱԿՈՒՄ ԲՆԱԿՎԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

2002թ ապրիլի 1-ին ՀՀ Կառավարությունն ընդունեց «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրում ընդգրկված բնակավայրերի վերկանգնման ենթակա տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և դրանք հեռացնելու միջոցառումների մասին» թիվ 317 որոշումը:

Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված, վերականգնման ենթակա տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և դրանք հեռացնելու աշխատանքների իրականացման, ինչպես նաև քաղաքացիներին պետական աջակցություն տրամադրելու համար նախատեսում էր ՀՀ պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին հատկացումներ կատարել:

Վերը նշված նպատակով 2002թ ՀՀ Պետական բյուջեով Վանաձոր քաղաքի ժամանակավոր տնակների ապամոնտաժման և տեղափոխման ծրագրով Լոռու մարզպետարանին հատկացվել է 15.0 մլն. դրամ:

2003թ Վանաձորի Երևանյան խճղ. թիվ 90 հասցեում գործող հանրակացարանի վերանորոգման աշխատանքների համար Լոռու մարզպետարանին հատկացվել է 22.0 մլն դրամ: Այդ հանրակացարանում տեղավորվել են ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած, մշտական բնակության վայր չունեցող 107 ընտանիքներ /323 անձ/:

2004, 2005, 2006թթ տնակների տեղահանման համար Լոռու մարզպետարանին ՀՀ պետական բյուջեից այլևս գումար չի հատկացվել: Մինչդեռ, Վանաձորում տարածքները տնակներից ազատելու աշխատանքները շարունակվում են, և ի կատարումն ՀՀ Կառավարության որոշման՝ տնակներն ազատելու դիմաց տնակի բնակչին առաջարկվում է.

- տեղափոխել տնակը Վանաձորի Լենինգրադյան տնակային ավան
- տեղափոխվել, հանրակացարաններում
- բնակարանի վարձակալության համար 2 տարի ժամանակով համայնքի բյուջեից յուրաքանչյուր ամիս բնակչին տրամադրում է 10 հազար դրամ:

ՀՀ Կառավարության որոշման կիրառման արդյունքում Վանաձորում ունենում ենք.

- կենտրոնացված տնակներով մեկ տնակային ավան
- անորոշ ժամանակով հանրակացարանում վերաբնակեցված տնակի բնակիչներ

- երկու տարի ժամանակով վարձակալած բնակարանում հանգրվանած վարձակալ ընտանիքներ:

Տարբերակներից յուրաքանչյուրի կիրառման արդյունքում քաղաքապետարանն ազատում է համայնքի ենթակայության հողատարածքները տնակներից, ոչ թե լուծում իր քաղաքացիների բնակարանային խնդիրը:

Հայկական Սահմանադրական Իրավապաշտպան կենտրոնի կողմից 2006թ հուլիսին ուսումնասիրություն է իրականացվել հանրակացարաններում, որտեղ վերաբնակեցվել են նախկին տնակաբնակները:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ բնակիչների ճնշող մեծամասնությունը տնակը գերադասում է քարաշեն հանրակացարանից: Տնակն առանձին է, սովորաբար ունի իր առանձին, թեկուզ ինքնաշեն խոհանոցը, սանհանգույցը, խորդանոցը:

Վանաձորի Երևանյան խճուղի թիվ 90 հասցեի, Ուսանողական փող. թիվ 10 հասցեի հանրակացարաններում բնակվում են 323 մարդ:

Հանրակացարանի շենքերի յուրաքանչյուր հարկաբաժնի ծայրում կան երեքական սանհանգույցներ, որոնք ընդհանուր են:

Սենյակները բնակիչների համար ծառայում են միաժամանակ որպես ննջարան, հյուրասենյակ, խոհանոց, լվացքատեղի և այլն:

Հանրակացարանի բնակիչները դժգոհում են տանիքների, սանհանգույցների կաթկթոցներից, հաճախակի կենցաղային վեճերից, հարբեցողներից, մարմնավաճառությամբ զբաղվող կանանց առկայությունից, և նրանց սիրեկանների անթաքույց այցերից, որը խաթարում է երեխաների կրթության և դաստիարակության գործը:

Բնակարանի վարձակալության համար համայնքապետարանի բյուջեից տնակի բնակչին նախատեսվում է յուրաքանչյուր ամիս 10հազ դրամ հատկացնել: Բնակարանի վարձակալության համար թիվ 317 որոշմամբ նախատեսված գումարները համայնքի բյուջե չի փոխանցվել 2004թ-ից:

Ստացվում է, որ Կառավարությունը իր կողմից կայացված որոշման իրականացման նյութական և իրավական պատասխանատվությունը թողնում է ՏԻՄ-ին:

Վանաձորի քաղաքապետարանը, վարձակալության պայմանին համաձայն, տնակի բնակիչներին նման միջոցներ տրամադրելու հնարավորություն չունի: Այն դեպքում, երբ տնակի տեղահանման, վարձակալության համար նախատեսված գումարը ստանալու համար քաղաքացին դիմում է Վանաձորի քաղաքապետարան, ստա-





նում է բացասական պատասխան: Վանաձորի Քիմիագործների թաղամասի թիվ 1, 2, 3, 4 և 7-րդ տնակային ավանները Կառավարության 317 որոշմանը համապատասխան պիտի տեղափոխվեն Վանաձորի թիվ 5 Լենինգրադյան տնակային ավան, որտեղ ներկայումս տեղադրված է 240 տնակ:

Մետաղյա տնակների շահագործման ժամկետը 5 տարի է: Մինչդեռ, Վանաձորի տնակային ավաններում քաղաքացիները բնակվում են 17 տարի: 5 անձից բաղկացած ընտանիքը տեղավորվում է 21քմ մակերես ունեցող տնակում:

Տնակի մաս կազմող սանհանգույցը, խոհանոցը բնակիչներն ավելացրել են սեփական ուժերով: Տնակի տեղափոխման արդյունքում դրան կից նման շինությունները դառնում են օգտագործման համար ոչ պիտանի:

Կենտրոնացված տնակային ավանը, տնակի կենցաղային և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները արհեստականորեն տարանջատում են տնակների բնակիչներին հասարակությունից:

Տնակների և տնակի բնակիչների նկատմամբ համաքաղաքացիների շրջանում ժամանակի ընթացքում ձևավորվել է առանձնացված վերաբերմունք: Համաքաղաքացիները տնակային ավանների բնակիչների հետ շատ հաճախ նույնացնում են մարմնավաճառության, թմրամոլության, քրեական հանցագործությունների և այլ բացասական երևույթների տարածումն ու զարգացումը:

Երկրաշարժից հետո 1988-1989թթ Վանաձորի քիմիագործների թաղամասի թիվ 1, 2, 3, 4, և 7-րդ տնակային ավանի Սպանդարյան, Վարդանանց, Շիրակացի հասցեների հողատարածքները հատկացվել են աղետի հետևանքով բնակարանը կորցրած քաղաքացիներին՝ տնակի տեղադրման նպատակով:

Նախկին Կիրովականի քաղաքային խորհուրդը աղետի հետևանքով բնակարանը կորցրած քաղաքացիներին նաև տնակներ է հատկացրել: Ընտանիքին տրամադրվել է տնակի օգտագործման ժամանակավոր օրդեր, և ընտանիքը հաշվառվել է տվյալ տնակի զբաղեցրած հասցեում:

Տնակի, տնակի զբաղեցրած հողատարածքի նկատմամբ որևէ փաստաթղթով քաղաքացու որևէ իրավունք չի ամրագրվել:

2002թ-ից տնակում՝ որպես ժամանակավոր շինությունում, բնակչին արգելվում է հաշվառել՝ ի տնակի հասցեում, ի կատարումն ՀՀ Կառավարության 317 որոշման: Սրա հետևանքով տնակային ավանի չափահաս անձինք չեն կարողանում ստանալ ՀՀ Անձնագիր:

Անձնագիր չունենալը զրկում է տնակի բնակչին.

- որպես նպաստառու փաստագրվելու
- համապատասխան հիվանդության առկայության դեպքում հաշմանդամության խումբ սահմանելու /ինչը մեծ մասամբ առկա է բնակիչների մոտ/
- աշխատանքի անցնելու
- կրթությունը շարունակելու
- ընտրելու և ընտրվելու իրավունքներից և հնարավորություններից:

Ընտրություններին տնակի բնակիչները չեն կարողանում մասնակցել, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ շահագրգիռ թեկնածու նրանց քվեն ստանալու նպատակով վերականգնում է նրանց քվեարկելու իրավունքը դատարանում:

Լենինգրադյան տնակային ավան տնակները տեղափոխելու դեպքում նոր իրավախախտումներից խուսափելու համար Վանաձորի քաղաքապետարանը պարտավոր է կայացնել Լենինգրադյան տնակային ավանի տարածքում հողահատկացման և հասցեավորման մասին որոշում:

ՀՀ Կառավարության թիվ 317 որոշումն ի կատար ածելուն զուգընթաց Վանաձորի քաղաքապետարանը ի կատար է ածել իր սեփական՝ տնակային ավանի հողատարածքների օտարման որոշումը:

2002-2004թթ Վանաձորի քաղաքապետարանի կողմից աճուրդի է դրվել և օտարվել 41 կտոր հողատարածք, որոնք արդեն նոր սեփականատերեր ունեն, թեև այդ հողատարածքների վրա դեռևս տեղադրված են տնակներ:

Արդյունքում ստացվել է այնպես, որ քաղաքացին ոչ թե բնակվում է քաղաքապետարանի թույլտվության և իմացության պայմաններում տեղադրված տնակում, այլ պօրինի կարգով բնակվում է ուրիշի սեփականությունը հանդիսացող տարածքում:

Ներկայումս տարածքի սեփականատիրոջ փոխարեն հանդես է գալիս Վանաձորի քաղաքապետարանը, և տնակն ազատելու պահանջով մոտ 20 հայց է ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի դատարան:

Քաղաքապետարանի կողմից ներկայացված հայցադիմումները ապամոնտաժելու և տեղափոխելու պահանջով են և վկայակոչում են ՀՀ Կառավարության թիվ 317 որոշումը:

Սակայն վերը նշված հիմքով խնդրի իրավական կարգավորումը քաղաքապետարանի օրինական պահանջ չէ, քանի որ տվյալ հողատա-







*ՏՆԱԿՈՒՄ ԲՆԱԿՎԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ*

րածքը այլևս չի համարվում համայնքի սեփականությունը: Այս իրավիճակում կարող է հայց ներկայացնել միայն հողի սեփականատերը, որն էլ վերջինս չի կատարում: Քաղաքապետարանը հայց ներկայացնելիս իր պահանջը հիմնավորում է նաև նրանով, որ քաղաքապետարանն իրավունք ունի հայց ներկայացնել հողը ոչ նպատակային օգտագործողի դեմ նպատակային օգտագործման պահանջով: Այս տեսակետից քաղաքապետի պահանջը ևս անհիմն է, քանի որ հողի նպատակային օգտագործման պահանջ համայնքի ղեկավարը կարող է ներկայացնել հողի սեփականատիրոջ կամ օրինական օգտագործողի /վարձակալություն, մշտական օգտագործում և այլն/ նկատմամբ:
Այսօրվա իրականությունը փաստում է, որ ոչ աղետի հետևանքով մշտական բնակության վայր չունեցող անօթևան ընտանիքների բնակարանային խնդրի լուծման համար ո՛չ պետությունը, ո՛չ տեղական ինքնակառավարման մարմինը համալիր ծրագիր չունի: Պետությունը քաղաքացիների նկատմամբ ունեցած իր պարտավորությունների պարտադիր մասն է իրականացնում, որը բնակչի խնդրի լուծմանը չի հանգեցնում:

Քաղաքացիները ստանձնել են միայն պետությանն անընդհատ մեղադրողի և պարտավորեցնողի դերը: Սեփական խնդիրների լուծման համար նրանց կողմից ոչ մի նախաձեռնողականություն չի դրսևորվել:

Հասարակությունը ստանձնել է պասիվ ու անտարբեր դիտորդի դերը: Պետության դիրքորոշումը նրա համար դարձել է բնական` «միևնույնն է ոչինչ չի փոխվելու»:

Ծայրահեղ մոտեցումները, անտարբերությունը կանգնեցրել են փակուղու առջև:
Թվում է, թե միայն մի երրորդ` հզոր ուժի շնորհիվ հնարավոր կլինի ստիպել պետությանը մտածելու սեփական քաղաքացիների խնդիրների լուծման մասին, փոխելու հասարակության վերաբերմունքը:

2006թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսների ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը նախաձեռնեց տնակների և տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանությանն ուղղված «Մեկուսացված քաղաքարթություն» ծրագիրը:

Կազմակերպությունն ի սկզբանե չստանձնեց ո՛չ դատավորի, ո՛չ դատապաշտպանի, ո՛չ էլ մեղադրողի դերը: Իրականացված միջոցառումների արդյունքում ակնկալվել էր միայն ակտիվացնել հասարակական նախաձեռնողականությունն ու մասնակցությունը սեփական խնդիրների լուծման համար: Չևավորել խնդիրների լուծման կառուցողական մոտեցման նախադեպ, որի արդյունքում քաղաքացու և պետության` հանձին տեղական ինքնակառավարման մարմնի, միջև կկայանա երկխոսություն, համագործակցություն:





ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՐԱՎԱԲԱՆ Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՔՈՒՆՑ
ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ «ԼՈՌԻ TV»
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՒՄ

# Մաս 2

## ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող ծրագիրը նախատեսում էր հաղթահարել հետևյալ խնդիրները.

- ձևավորել երկխոսություն տնակային ավանի բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև

- բարձրացնել հասարակական իրազեկման մակարդակը տնակների և տնակային ավանի բնակիչների, նրանց խնդիրների վերաբերյալ:

Ակնկալվող արդյունքն ունենալու համար կազմակերպության կողմից իրականացված ծրագիրն ընդգրկել է հետևյալ գործողությունները.

- ուղիղ հեռուստաեթերներ
- սոցիալական գովազդի նկարահանում և հեռարձակում
- հասարակական լսումներ
- կլոր սեղաններ` տեղական ինքնակառավարման մարմինների և տնակային ավանների բնակիչների մասնակցությամբ
- անվճար իրավական խորհրդատվություն տնակային ավանի բնակիչների համար
- հասարակական կարծիքի ուսումնասիրություն
- տնակային ավանի բնակիչների խնդիրների տեղեկատվական բազայի ձևավորում
- հասարակական ակցիաներ
- գրքույկի տպագրություն և տարածում
- պաստառի տպագրություն և տարածում:

## ՈՒՂԻՂ ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐՆԵՐ

Տնակային ավանի բնակիչների խնդիրների վերաբերյալ հասարակական իրազեկման մակարդակի բարձրացման համար կազմակերպվել է 5 ուղիղ հեռուստաեթեր` տնակային ավանի բնակիչների, տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ հետևյալ թեմաներով.

1. «Տնակային ավաններ-մեկուսացված քաղաքակրթություն»:
2. «Հասարակական անտարբերությունն ու դրա հետևանքները»:
3. «Տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները»:
5. «Տնակային ավանի բնակիչների կրթական խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները»:
6. «Տնակային ավանի բնակիչների առողջապահական խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները»:

## ՍՈՑԻԼԱԿԱՆ ԳՈՎԱԶԴԻ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

Ծրագրի շրջանակներում նկարահանվել է տնակային ավանի բնակիչների առկա խնդիրների մասին պատմող 3 սոցիալական գովազդ:

Սոցիալական առաջին գովազդն անդրադարձել է տնակային ավանի բնակիչների բնակարանային պայմաններին:

Երկրորդ գովազդը տեղեկություններ էր հաղորդում Վանաձորի Քիմիագործների թաղամասի տնակներում ապրող ընտանիքների թվի մասին:

Երրորդ գովազդի միջոցով տնակային ավանի բնակիչները դիմում են. «Պետական հոգածության կարիք կա»:

Սոցիալական երեք գովազդներն էլ նկարահանվել են տնակային ավանների տարածքում, և հերոսներն էլ հենց տնակային ավանի բնակիչներն են:

Սոցիալական երեք գովազդները եթեր են հեռարձակվել ծրագրի ողջ ընթացքում` տեղական «Լոռի TV» հեռուստատեսությամբ` օրական 2 անգամ:







***ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՏԻՄ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ***

***ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Գ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՔՈՒՆՑ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉ***



## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Տնակային ավանի բնակիչների խնդիրների համակարգման, այդ խնդիրները համապատասխան պատասխանատու կառույցներին ներկայացնելու նպատակով տնակային ավանի բնակիչների մասնակցությամբ կազմակերպվել է 3 հասարակական լսում:

«Տնակային ավաններ: Դրանց հետևանքներն ու հիմնախնդրները» թեմայով քննարկման ժամանակ տնակային ավանի բնակիչների կողմից ներկայացվել են առկա հիմնական խնդիրները:

Տնակային ավանի բնակիչների մասնակցությամբ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների աջակցությամբ մշակվել և Վանաձորի ավագանուն է ներկայացվել տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման առաջարկությունների փաթեթ:

Երրորդ հանդիպման ընթացքում քննարկվել է Վանաձոր համայնքի ենթակայության քանդված և թալանված բնակարանների գործընթացում տնակային ավանի բնակիչների մասնակցության հնարավորությունները:

## ԿԼՈՐ ՍԵՂԱՆՆԵՐ

Տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կառավարման մարմինների և տնակային ավանի բնակիչների միջև երկխոսության կայացմանը նպաստելու նպատակով նրանց մասնակցությամբ կազմակերպվել է վեց կլոր սեղան:

1. «Տնակային ավանի բնակիչների խնդիրները: Ո՞վ է վճռելու»
2. «Համայնքի բյուջեի հնարավորությունները քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում»:
3. «Ինչպե՞ս կարող են տնակային ավանի բնակիչները մասնակցել բնակարանների բաշխման գործընթացին»:
4. «Տնակային ավանի բնակիչների խնդիրները որպես ՏԻՄ մարմինների և քաղաքական կուսակցությունների օրակարգային խնդիր»:
5. «Հասարակական միջոցառումներ՝ ի պաշտպանություն տնակային ավանի բնակիչների»:

Քննարկումների ընթացքում մասնակիցներին տրամադրվել են համապատասխան նյութեր, գրություններ:

## ԻՐԱՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնակային ավանի բնակիչների կողմից իրենց խնդիրների լուծման ուղղությամբ նախաձեռնողականություն դրսևորելուն նպաստելու համար ծրագրի ողջ ընթացքում տնակային ավանի բնակիչների համար իրականացվել է անվճար իրավաբանական խորհրդատվություն: Իրավախորհրդատվությունն իրականացվել է թե՛ ՀՔԱ Վանաձորի գրասենյակում, թե՛ տնակային ավանի տարածքում:

Իրավախորհրդատվությունից բացի, իրականացվել է նաև տնակային ավանի բնակիչների շահերի դատական պաշտպանություն:

Տնակային ավանի բնակիչների շահերի իրավական պաշտպանության նպատակով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից առանձին գործընթաց է սկսվել տնակային ավանի հողատարածքների օտարման օրինականությունը պարզելու համար: Տարբեր գրություններ է ուղարկվել Վանաձորի քաղաքապետարան, մարզպետարան, Լոռու մարզի դատախազություն, ՀՀ Կառավարություն:

/Հավելված 1, 2, 3, 4, 5, 6, 7, 10/



## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Տնակային ավանի բնակիչների, նրանց առկա խնդիրների վերաբերյալ հասարակական իրազեկման մակարդակը, հասարակության վերաբերմունքը պարզելու համար ծրագրի սկզբում և վերջում իրականացվել է հասարակական հարցում 500 վանաձորցիների շրջանում:

Հարցումն իր մեջ ներառել է քաղաքացիների մեկնաբանությունները, տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծման վերաբերյալ նրանց առաջարկությունները:

/Հավելված 12, 13/

## ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Վանաձորի Քիմիագործների թաղամասի թիվ 1, 2, 3, 4, 5 և 7-րդ ավաններում իրականացվել է անհատական համակողմանի ուսումնասիրություն: Ուսումնասիրության իրականացման համար կազմվել է ուսումնասիրման հատուկ անկետա: Յուրաքանչյուր ընտանիքի համար լրացվել է 1 անկետա, որը տեղեկատվություն է հաղորդում ընտանիքի կենցաղային, սոցիալական, առողջապահական, կրթական խնդիրների վերաբերյալ:

/Հավելված 15/

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՑԻԱ

Տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանության գործընթացում ընդգրկվել են նաև վանաձորցիները: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տնակային ավանի հողատարածքների օտարման օրինականությունը պարզելու նպատակով գրություն է ուղարկվել Լոռու մարզի դատախազություն: Դատախազության կողմից բարձրացված խնդրի ուսումնասիրության ընթացքի, արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար վանաձորցիների կողմից գրություններ են ուղարկվել Լոռու մարզի դատախազություն:

/Հավելված 16/

## ԳՐՔՈՒՅԿԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված գիտելիքների, տեղեկատվության, փորձի, ինչպես նաև իրականացված գործողությունների արդյունքների՝ մշակված առաջարկությունների փաթեթ, խնդիրների լուծման մեխանիզմները տարածելու համար տպագրվել է «Մեկուսացված քաղաքականություն» գրքույկը: Գրքույկը տպագրվել է 500 օրինակից, տարածվել տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների, դեսպանատների, այլ շահագրգիռ կառույցների շրջանում:




## ՊԱՍՏԱՌԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տնակային ավանի բնակիչների, նրանց առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության տարածման համար տպագրվել է նաև «Մեկուսացված քաղաքակրթություն» պաստառը: Պաստառը տպագրվել է 300 օրինակից, տարածվել Վանաձոր քաղաքում, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների, դեսպանատների, այլ շահագրգիռ կառույցների շրջանում:



# ԳԼՈՒԽ 2
# ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՍ 1

### ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ուղիղ հեռուստաեթերներ, հասարակական քննարկումներ և կլոր սեղաններ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից կազմակերպված ուղիղ եթերներին, կլոր սեղաններին, հասարակական քննարկումներին մասնակցել են Վանաձորի Քիմիագործների թաղամասի թիվ 1, 2, 3, 4,  և 7-րդ տնակային ավանների, Լենինգրադյան տնակային ավանի բակիչները, Վանաձորի քաղաքապետարանի, Վանաձոր համայնքի ավագանու, քաղաքական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հասարակական քննարկումների, կլոր սեղանների միջոցով տնակային ավանի բնակիչները փաստացի և անմիջական մասնակցություն են ունեցել իրենց խնդիրների լուծման նպատակով ՏԻՄ-ի կողմից կայացվող որոշումներում:

Որոշ հարցերի վերաբերյալ ՏԻՄ մարմինների ներկայացուցիչները տվել են լրացուցիչ բացատրություններ և մեկնաբանություններ:

**Արդյունքում.**

- բացահայտվել և քննարկվել են տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման երեք տարբեր մոտեցումներ՝ տնակի զբաղեցրած հողատարածքի հանձնումը բնակչին, համայնքի ենթակայության բնակֆոնդի ձևավորում, համայնքի ենթակայության քանդված և թալանված բնակարանների հանձնումը տնակի բնակիչներին:

- տնակային ավանի բնակիչների կողմից մշակվել և Վանաձոր համայնքի ավագնու նիստին է ներկայցվել տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման ութ առաջարկություն: Այդ առաջարկությունները քննարկվել են բնակիչների մասնակցությամբ կայացած ավագանու արտահերթ նիստում: Քննարկման արդյունքում Վանաձոր համայնքի ավագանին կայացրել է համայնքի ենթակայության քանդված և թալանված բնակարանները բնակիչներին հանձնելու մասին որոշում: Քննարկումների ժամանակ տնակային ավանի բնակչների խնդիրների լուծման վերաբերյալ առկա տարբեր մոտեցումների շուրջ մասնակիցների միջև կայացել են բանակցություններ:

Բանակցությունների արդյունքում 2006թ հուլիսի 21-ին Վանաձոր համայնքի ավագանին կայացրել է «Լքված և թալանված բնակարանների հետագա տնօրինման մասին» թիվ 82-Ն որոշումը /հավելված 11/: Այդ որոշմանը համաձայն՝ համայնքի ենթակայության մոտ 42 քանդված և թալանված բնակարանները նախատեսվում է հատկացնել տնակի բնակիչներին:

### ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Տնակային ավանի բնակիչները սեփական խնդրի լուծման համար ունեն իրենց դիրքորոշումը:

Նրանց համոզմամբ ՀՀ «Հողային օրենսգիրքը» հնարավորություն է տալիս տնակի զբաղեցրած հողատարածքն անվարձահատույց հանձնել տնակի սեփականատիրոջը: Որպես հողի սեփականատեր տնակի բնակիչը ինքը կկարողանար տնօրինել տարածքը՝ կա՛մ սեփական տուն կառուցել, կա՛մ վաճառել այդ հողակտորը, և նոր բնակարան գնել:

Վանաձորի քաղաքապետարանի փաստարկներով՝ ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» նախատեսված վաղեմության ժամկետով գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերել բնակիչները չեն կարող: Տնակը համարվում է շարժական գույք, և հատկացվել է բնակիչներին որպես ժամանակավոր կացարան, ժամանակավոր օրդերով: Բնակիչներին տրվել է տնակի, ոչ հողի օգտագործման իրավունք: Ուստի, տնակի բնակչի կողմից հողի բարեխիղճ օգտագործումը մնում է գրեթե չապացուցվող փաստ:

ՀՀ «Հողային օրենսքրքով»՝ համայնքի ենթակայության հողատարածքերն օտարվում են միայն աճուրդի կարգով: Այս դեպքում բնակիչներն առաջարկում են իրականացնել փակ աճուրդ, միայն տնակային ավանի բնակիչների շրջանում, և հողակտորները իրենց մեկնարկային գնով վաճառել տնակի բնակիչներին:

Վանաձորի քաղաքապետարանը փակ աճուրդը համարում է ոչ իրատեսական, քանի որ այդ հողատարածքների մի մասն արդեն օտարված է, մյուս մասն էլ առանձնացված է նպատակային օգտագործման համար:










*ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ «ԼՈՌԻ TV» ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՒՄ*

## ՈՒՂԻՂ ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐՆԵՐ

2006թ մարտից-սեպտեմբեր ամիսների ընթացքում Վանաձորի «Լոռի TV» հեռուսատեսությամբ յուրաքանչյուր ամիս կայացել է 1 ուղիղ հեռուստաեթեր:

Եթերների ընթացքում տնակների և տնակային ավանի բնակիչները հանրայնացրել են իրենց խնդիրները, ուղղել իրենց հարցերը համապատասխան պատասխանատու կառույցներին ու մարմիններին: Բնակիչների խնդիրների քննարկման գործընթացում վանաձորցիներն ունեցել են իրենց մասնակցությունն ու արձագանքները ուղիղ հեռախոսակապի միջոցով:

## «ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐ ԵՒ ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ»

2006թ մայիսի 15-ի առաջին եթերը կայացել է Վանաձորի տնակային ավանի բնակիչների, Վանաձորի քաղաքապետարանի համատիրության և բնակարանային տնտեսության բաժնի պետ Գրիշա Պառավյանի, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի մասնակցությամբ:

Վանաձորի քաղաքապետարանի համատիրության և բնակարանային տնտեսության բաժնի պետ Գրիշա Պառավյանի բացատրությամբ Վանաձորի համայնքապետարանը ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիներին բնակտարածք տրամադրելու հստակ ծրագիր ունի: Այդ ծրագիրը բխում է ՀՀ Կառավարության աղետի գոտու տարածքը ոչ հիմնական շինություններից ազատելու մասին որոշումից: Վանաձորի համայնքապետարանը տնակների բնակիչներին երկու տարով տեղափոխել է Վանաձորի բազմաբնակարան հանրակացարաններ կամ նրանց յուրաքանչյուր ամսվա համար տրամադրել 10 հազարական դրամներ:

Թե ինչ է լինելու այդ քաղաքացիների հետ երկու տարի հետո, որոշել է Վանաձորի համայնքապետարանը՝ տնակը վաճառելու համար հատկացնել տնակի բնակչին:

Տնակի բնակիչներին հետաքրքրող ամենաարդիական հարցն առնչվում էր տնակի զբաղեցրած հողատարածքի նկատմամբ իրենց ունեցած իրավունքներին:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողն օտարվում է աճուրդի կարգով, ոչ ոք այն ձեռք բերելու գործընթացում առավելություններ չունի, իսկ տնակային ավանի տարածքի մեծ մասը նախատեսված է մարզական համալիր կենտ-



րոն կառուցելու համար, որի շինարությունը, ցավոք, դեռ չի սկսվել:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը գտնում է, որ տեղական ինքնակառավարման մարմնի նպատակային քաղաքականության առկայության դեպքում հնարավոր կլիներ բարեկարգել տնակային ավանների կոմունալ պայմանները: Սա կլինի հենց այն որոշումը, որը կայացված է ի նպաստ հենց այդ բնակիչների:

Գրիշա Պառավյանը համոզված է, որ Կառավարությունը չի անտեսում իր քաղաքացիներին: Կառավարության 2002թ 317 որոշումը տնակային ավանի բնակիչների մասին մտահոգվելու առաջին քայլն է:

Հողատարածքները ժամանակավոր շինություններից պետք է ազատվեն հետևյալ հերթականությամբ:

Առաջին հերթին պետք է տարածքն ազատեն նրանք, ովքեր ունեն բնակարան, բայց տնակը չեն լքում: Երկրորդ հերթին նրանք, ովքեր բնակարան են ստացել, բայց վաճառել են, և այդ հերթականությամբ:

Նա հավաստիացնում է, որ ոչ ոք դրսում չի մնա: Մարդիկ պիտի իրենք որոշեն՝ երկու տարվա ընթացքում ստանալ 10 հազ. դրամ յուրաքանչյուր ամիս, թե վերաբնակեցվեն հանրակացարանում, և վերջապես աղետի հետևանքով բնակարանը կորցրած քաղաքացիներն ընդգրկված են բնակարան ստանալու հերթացուցակում:

## «ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

Հունիսի 15-ին կայացած երկրորդ հեռուստաեթերի ժամանակ տնակային ավանի բնակիչները ներկայացրել են առողջապահության բնագավառում առկա խնդիրները:

Տնակի բնակիչների մի մասը դժգոհում է դեղորայքի, մյուս մասն առհասարակ բժշկական օգնության ստացման անմատչելիությունից:

Այս կամ այն տեսակի հիվանդությամբ տառապող տնակային ավանի բնակիչները մեծ խնդիրներ ունեն հաշմանդամության խմբի սահմանման հետ:

Տնակային ավանի բնակիչները պատմում են, թե այն տպավորությունն են ստացել, որ առողջ հասարակությունից հաշմանդամներին արտաքսում են, մինչդեռ արտերկրում մեծ ջանքեր են գործադրում հաշմանդամներին առողջ հասարակություն ինտեգրելու համար:

Առողջության հետ կապված խնդիրների առանձին մաս են կազմում տնակի բնակիչների՝ հատկապես երեխաների հոգեբանական տարբեր խնդիրները: Բնակիչները գտնում են, որ նրանց հետ պիտի աշխատեն հոգեբաններ: Պետությունը նման կարգի հարցերով, ըստ տնակային ավանի բնակիչների, չի հետաքրքրվում: Օգնության խնդրանքով պետական այրերի աջակցությանը դիմած քաղաքացիներին էլ պատասխանում են, որ եթե չեք կարողանում պահել, երեխաներ մի՛ ունեցեք:

Երեխաների առողջության վրա զգալի ազդեցություն են թողնում Քիմիագործների թաղամասի թիվ 3 տնակային ավանի հարևանությամբ տեղակայված երեք գազալցման կայանները: Երեխաներն անընդհատ բողոքում են գլխապտույտից և սրտխառնոցից:

Մեծ վտանգ են ներկայացնում նաև թափառող շները, կատուները, որոնք հանդիսանում են տնակների տեղահանման հետևանքով առաջացած կենցաղային աղբի, վարակի տարածողները: Տնակային ավանում երեխաների համար խաղահրապարակներ չկան, իսկ շենքի բնակիչներն էլ նրանց աքսորում են շենքի բակից, ասելով՝ գնացեք, ձեր տնակի բակում խաղացեք:

## «ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

Հուլիսի 15-ին կայացած եթերի ընթացքում մասնակիցները քննարկել և անդրադարձել են տնակային ավանների երեխաների կրթության առնչվող մի քանի հարցերի.

- ինչպիսի՞ն են տնակային ավանի բնակիչների կրթական հնարավորությունները

- ի՞նչ կրթական խնդիրների են առնչվում այդ երեխաները

- ի՞նչ քայլեր են ձեռնարկվում այդ խնդիրները լուծելու համար:

### Կրթական հնարավորություններ

Տնակային ավանի բնակիչները, ինչպես ՀՀ բոլոր քաղաքացիները, ունեն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունք: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի կարծի-





քով այդ իրավունքի կենսագործման համար նախապայմանները ապահովված չեն: Տնակային ավանների երեխաների մեծ մասը հիմնականում ուսանում են գիշերօթիկ դպրոցներում: Սակայն ՀՀ Կառավարության որոշմամբ սկսվել է գիշերօթիկ դպրոցների բեռնաթափման գործընթացը:

«Զանգակատուն» կրթադաստիարակչական կենտրոնի տնօրենը գտնում է, որ այդ երեխաների համար կրթության հնարավորությունները բավականին սահմանափակ են:

Վանաձորում գործող «Զանգակատուն» կրթադաստիարակչական կենտրոնը զբաղվում է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ուսուցմամբ: Կենտրոնում այդ երեխաներին կերակրում են, պարապում հայերեն, մաթեմատիկա, հոգեբանություն, տրամաբանություն: Կենտրոն են հաճախում մոտ 100 սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ:

Տնակային ավանի բնակիչները գտնում են, որ տարբերություն չկա՝ քաղաքացին տնակի բնակիչ է, թե շենքի: Միևնույն ժամանակ բնակիչները նշում են, որ տեղյակ լինելով տնակի բնակիչների սոցիալ-տնտեսական խնդիրներին, իշխանության մարմինները տնակի բնակիչների կրթության համար լրացուցիչ հնարավորություններ չեն ստեղծում:

Տարբեր էին համաքաղաքացիների կարծիքները: Մի մասը գտնում է, որ տնակային ավանի բնակիչները, մասնավորապես ծնողներն իրենք են զրկել իրենց երեխաներին կրթության հնարավորություններից: Նրանք վաճառել են իրենց բնակարանները և հայտնվել տնակում՝ լրացուցիչ խնդիրներ ստեղծելով թե՛ երեխաների, թե՛ իրենց համար:

«Պետությունն այդ պարագայում լրացուցիչ պարտավորություններ պիտի ստանձնի»,-համոզված է Արթուր Սաքունցը: Պետք է սոցիալական զարգացման հնարավորություններ ապահովել, որպեսզի քաղաքացին իր սենդի, առողջության պահպանման համար ստիպված չլինի վաճառել բնակարանը:

«Զանգակատուն» կրթադաստիարակչական կենտրոնի տնօրենը նշում է, որ շենքային պայմաններում և տնակներում ապրող երեխաների կրթական մակարդակի միջև առանձնապես տարբերություն չկա:

## Կրթական խնդիրները

Տնակի երեխաների համար կրթության ամենամեծ խնդիրը կապված է հաշվառման հետ: Տնակի չափահաս երեխաներին պետությունը տնակի հասցեում չի հաշվառում, այլ հասցեում հաշվառվելու հնարավորություն էլ նրանք չունեն: Ստացվում է, որ նրանք չունեն անձը հաստատող փաստաթուղթ, սոցիալական քարտ: Այս դեպքում նրանք չեն կարողանում դիմել բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Տնակի բնակիչների ներկայացմամբ՝ երեխաների կրթության վրա ազդող հիմնական բացասական գործոնը տնակի ընդհանուր կենսապայմաններն են: Հաճախ երկու և ավելի դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքում երեխաների դաս սովորելը դառնում է անհնար: Տնակի լուսավորությունը, փոքր տարածքը սահմանափակում են ուսուցման պրոցեսը: Երեխաների ընդունակությունների զարգացման հնարավորություն չկա: Մեծ ազդեցություն է թողնում նաև ուսուցիչների վերաբերմունքը: Սոցիալապես ապահովված ընտանիքների երեխաները հաճախում են մասնավոր պարապմունքների, ուսուցիչները նրանց բարձր գնահատականների են արժանացնում: Մյուս երեխաները մնում են ուշադրությունից դուրս:

Տնակի սահմանափակ տարածքը, բնակիչների համոզմամբ, համարվում է հիմնական խնդիրը: Երեխաները չունեն առանձին գրասեղան, նույնիսկ փոքր անկյուն, որպեսզի դաս սովորելիս նրանց ոչ ոք չխանգարի: Սա է պատճառը, որ երեխան շատ հաճախ դպրոց է գնում անպատրաստ: Ուսուցիչը մեղավոր չէ:

«Զանգակատուն» կրթադաստիարակչական կենտրոնի տնօրենը նշում է, որ այն բացերը, որոնցով չի զբաղվում կառավարությունը, փորձում են լուծել ՀԿ-ները: Սակայն նրանք ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն, իսկ այդ հարցերի համար պետական իրավասություններ են անհրաժեշտ:

Տնակի բնակիչներն արտահայտում են իրենց դժգոհությունը թե՛ գիտելիքների տրամադրման, թե՛ դպրոցում հավաքվող գումարների համար:

## «ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Օգոստոսի 15-ին «Լոռի TV» հեռուստատեսության եթերում «Մեկուսացված քաղաքակրթություն» ծրագրի շրջանակներում կայացավ Վանաձորի տնակային ավանների խնդիրներին առնչվող 4-րդ ուղիղ եթերը:

Ի՞նչ առաջարկություններ կան տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման համար:

Ինչպիսի՞ն են այդ առաջարկությունների իրականացման հնարա-





ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱ-
ՆԻ ԲՆԱԿԻՉՆԵ-
ՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՔՆՆԱՐԿՈՒՄ
«ԼՈՌԻ TV» ՀԵ-
ՌՈՒՍՏԱՏԵՍ
ՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՂ
ԵԹԵՐՈՒՄ
ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱ-
ՆԻ ԲՆԱԿԻՉՆԵ-
ՐԻ, ՀԿ, ՏԻՄ-Ի
ՆԵՐԿԱՅԱՑՈՒ
ՑԻՉՆԵՐԻ ՄԱՍ-
ՆԱԿՑՈՒԹ
ՅԱՄԲ

վորությունները:

Այս հարցերի շուրջ քննարկում ծավալեցին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարը, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավաբանը, Վանաձորի քաղաքապետարանի իրավաբանը, Վանաձորի քաղաքապետարանի համատիրության և բնակարանային տնտեսության բաժնի պետը, տնակային ավանի բնակիչները:

Համայնքի ավագանու արտահերթ նիստում տնակային ավանի բնակիչները ներկայացրել էին բնակարանային խնդրի լուծման իրենց առաջարկությունները, մասնավորապես.

1. Վանաձոր քաղաքի տնակային 1, 2, 3, 4 տնակային ավանների տարածքներից մեկում առանձնացնել հողատարածք, եթե նման հողատարածք չկա, օրենքով սահմանված կարգով փոխել հողատարածքի նպատակային նշանակությունը՝ տնակային ավանի բնակիչների բնակարանաշինության նպատակով:

2. Ստեղծել բնակարանաշինության հիմնադրամ՝ ՏԻՄ-ի բյուջեի, պետական բյուջեի, բնակիչների հատկացումները ներառյալ:

3. Համայնքի ենթակայության ներքո գտնվող 42 քանդված և թալանված բնակարանները բնակության համար պիտանի դարձնելու համար ՏԻՄ բյուջեից տրամադրել հատկացումներ՝ 2 տարի ամսական 10 հազ. դրամ վարձակալության համար տնակի բնակիչներին տրվող գումարի չափով:

Վանաձորի քաղաքապետարանի համատիրության և բնակարանային տնտեսության բաժնի պետ Գրիշա Պառավյանը ներկայացրեց այդ առաջարկությունների իրականացման հնարավորությունները:

Տնակի հողատարածքի նկատմամբ տնակի բնակիչը որևէ իրավասություն չունի, քանի որ այն համարվում է ժամանակավոր շինություն: Համայնքի ենթակայության տակ գտնվող հողատարածքները հանձնվում են քաղաքացուն միայն աճուրդի կարգով: Բնակարանաշինության համար տնակային ավանների տարածքում հողատարածք առանձնացնելն այս առումով ոչ իրատեսական է:

Համայնքի ենթակայության տակ գտնվող քանդված և թալանված բնակարանները, լրացուցիչ ուսումնասիրությունից հետո, կտրամադրվեն բնակիչներին: Քաղաքապետարանը պատրաստ է տրամադրել նաև ֆինանսական աջակցություն՝ տնակի արժեքը, բնակարանի վարձակալության համար նախատեսված գումարը:

Իրավական ի՞նչ հնարավորություններ և խոչընդոտներ կան այդ առաջարկությունների իրականացման համար:

ՀՀ «Հողային օրեսգիրքը» պահանջում է համայնքային ենթակայության հողն օտարել աճուրդով: Հողակտորը չի կարող օտարվել, եթե տնակը գտնվում է այդ հողի վրա, որտեղ էլ բնակվում են քաղաքացիները: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով տնակային ավանի բնակիչների խնդիրը դասվում է համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների շարքին՝ սոցիալական աջակցություն:

Քանդված և թալանված բնակարանների օտարման հնարավորություն այդ նույն օրենքը նախատեսում է:

Տնակի զբաղեցրած տարածքները, ՀՀ «Հողային օրենսգիրքը» թույլ չի տալիս անհատույց հատկացնել բնակչին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը գտնում է, որ պետությունը ՀՀ Սահմանադրությամբ, վավերացրած միջազգային պայմանագրերով պարտավորություններ ունի իր քաղաքացիների նկատմամբ: Սոցիալական ապահովության և աջակցության ատիճանը բնակարան չունեցողների նկատմամբ պետության կողմից ավելի մեծ պիտի լինի:





42 բնակարանը տնակում ապրող 186 ընտանիքի համար ամբողջական լուծման հնարավորություն չէ:

ՀՀ օրենսդրությունը թույլատրում է փոխել քաղաքի գլխավոր հատակագիծն ավագանու որոշմամբ, այսինքն՝ տնակային ավանի տարածքներից մեկի նպատակային օգտագործման կարգավիճակը փոխել՝ համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով:

Այս առաջարկության իրականացման համար համայնքի կողմից տարբեր միջազգային ֆոնդերի կարելի է ծրագրեր ներկայացել: Այլապես, քանդված և թալանված բնակարաններից օգտվողների ցուցակից դուրս մնացած քաղաքացիների բնակարանայի խնդիրը մնում է չլուծված:

Քաղաքապետարանը այդ քաղաքացիներին առաջարկում է երկու տարի կա՛մ վարձով բնակվել, կա՛մ հանրակացարան տեղափոխվել, կա՛մ տնակը տեղափոխել Լենինգրադյան տնակային ավան: Իսկ ի՞նչ կլինի երկու տարի անց:

Վանաձորի քաղաքապետարանի համատիրության և բնակարանային տնտեսության բաժնի պետ Գրիշա Պառավյանը գտնում է, որ յուրաքանչյուր բնակիչ պիտի կառուցողական մտածի, սեփական ուժերով լուծի իր խնդիրը:

## «ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐԸ, ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ»

Հոկտեմբերի 23-ին «Լոռի TV» հեռուստաընկերության եթերում կայացավ «Մեկուսացված քաղաքակրթություն» ծրագրի ամփոփիչ ուղիղ եթերը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը ներկայացրեց ապրիլից գրասենյակի կողմից իրականացված տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանությանն ուղղված կոնկրետ քայլերը:

- Ծրագրի իրականացման ընթացքում տնակային ավանի բնակիչները ներգրավվեցին իրենց խնդիրների լուծման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

- Այդ աշխատանքներն ավելի համակարգված տեսք ստացան: Հենց տնակային ավանի բնակիչների մասնակցությամբ մշակվեց որոշակի կոնցեպցիա այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Տնակային ավանի բնակիչների գնահատմամբ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ավագանու անդամների մասնակցությամբ կազմակերպված քննարկումները զգալի արդյունքներ են տվել: Դրա վառ ապացույցը համատեղ մշակված համայնքի ենթակայության քանդված և թալանված բնակարանների հատկացման կարգն է: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը նախատեսում է վերահսկել այդ բնակարանների բաշխման գործընթացը, ակնկալելով, որ Վանաձորի քաղաքապետարանի կողմից այդ բնակարանների բաշխումը կիրականացվի թափանցիկ և հրապարակային:
Տնակային ավանի բնակիչներին տրամադրվել են իրավաբանական խորհրդատվություններ, որոնց ընթացքում էլ հենց բացահայտվել են բազմաթիվ խնդիրներ, որոնց ուղղությամբ պետք է աշխատել:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը շարունակելու է տարածքների օտարման օրինականության ճշտման ուղղությամբ տարվող աշխատանքները, ակնկալելով, որ Լոռու մարզի դատախազությունը նույնպես հետևողական կլինի: Ուղարկվելու է նաև համապատասխան գրություն հանրապետության նախագահի վերահսկողության պալատ, որպեսզի նրանք նույնպես վերահսկողություն իրականացնեն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մտադիր է ներգրավել այս խնդիրների լուծման մեջ Վանաձոր քաղաքից ընտրված Ազգային ժողովի պատգամավորներին, որպեսզի 2001թ-ի հուլիսին ընդունված օրենքի մեջ կատարվեն համապատասխան փոփոխություններ և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաստատված տնակային ավանում բնակվող ոչ աղետից տուժած ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման կոնցեպցիան նույնպես օրենքի ուժ ստանա:

Հաղորդման վերջում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Ա.Սաքունցը կոչ արեց տնակային ավանի բնակիչներին ավելի ակտիվ մասնակցել իրենց խնդիրների լուծման ուղղությամբ տարվող աշխատանքներում, լինել համախմբված, համբերատար և հաստատակամ որոշակի արդյունքի հասնելու համար:







***ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ, ՀԿ, ՏԻՄ-Ի, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ***

## ԿԼՈՐ ՍԵՂԱՆՆԵՐ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Կլոր սեղանների, քննարկումների ժամանակ քննարկվել են խնդրի լուծման տարբեր մոտեցումներ, երևան են հանվել կոնկրետ քայլերի, առաջարկությունների դասակարգումը, ամփոփումը: Տնակային ավանի բնակիչները հանդես են եկել սեփական առաջարկություններով, նախաձեռնողականություն դրսևորել այդ առաջարկությունների ի կատար ածման համար, փաստացի մասնակցություն ունեցել իրենց խնդիրների լուծման համար կայացվող որոշումներում:

## «ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐ: ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տնակային ավանի բնակիչների հետ կայացած հանդիպման ընթացքում Վանաձորի Քիմիագործների թաղամասի թիվ 1, 2, 3, 4, և 7 բնակիչները ներկայացրել են առկա տարբեր ոլորտների առնչվող բազմաթիվ խնդիրներ:

Մինչ 1988թ. երկրաշարժը բնակարանի հերթացուցակում ընդգրկված քաղաքացիներն այսօր բնակարանի ստացման ոչ մի հերթացուցակում ընդգրկված չեն: Նրանց բնակարանով ապահովելու ոչ մի ծրագիր կամ հնարավորություն ներկայումս չկա:

Տնակային ավանի յուրաքանչյուր բնակիչ առնչվում է հաշվառման հետ կապված խնդրին, որը ունի իր հետևանքները:

Տնակի հաշվառում չունեցող բնակիչները նշում են, որ հաշվառման պատճառով տնակային ավանի բնակիչներին չեն գրանցում գործազրկության ցուցակում, չեն տրամադրում ոսկու գրավով գումար բանկերից: Նրանք հնարավորություն չունեն ձեռք բերել ապրանքներ ապառիկ վաճառքով:

Ընտրություններին, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ շահագրգիռ թեկնածու նրանց քվեն ստանալու նպատակով ստանում է նրանց քվեարկելու իրավունքը դատարանում, բնակիչները չեն մասնակցում:

Միևնույն ժամանակ, հաշվառում չունեցողների հետ զարմանալի դեպքեր են պատահում: Կարինե Պողոսյանն իր ընտանիքով 1985թ-ին Ուկրաինայից տեղափոխվել է Հայաստան, 1997-ից ապրում է տնակում: Ուկրաինայի քաղաքացիություն ունեցող նրա որդին, սակայն զորակոչվել է ՀՀ Զինված ուժերում ծառայելու:

Տնակային ավանի բնակիչների առողջական բազմաթիվ խնդիրները ևս լուծում չեն ստանում հաշվառում չունենալու պատճառով:

Որպես բազմազավակ մայր՝ Մարինե Ավագյանի ընտանեկան կարգավիճակը համապատասխանում է անվճար դեղորայքից օգտվողների ցուցակին: Սակայն առանց գրանցման նախատեսված արտոնություններից չեն կարողանում օգտվել, հիվանդություններն էլ իրենք իրենցով չեն անցնում:

Հաշվառում չունենալու պատճառով քաղաքացիները չեն կարողանում սահմանել իրենց հիվանդության հաշմանդամության խումբը, օգտվել անվճար բուժսպասարկումից:

ՀՀ Կառավարության 2002թ ապրիլի թիվ 317 որոշման համաձայն՝ տարածքներն ազատվում են ժամանակավոր շինություններից: Ազատված հողատարածքներն իրենց տրամադրելու խնդրանքով













***ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՀԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՍԵՅՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ «ՀՁՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅՑՈՒՑԻՉ ՎԱՀԱՆ ՂՈՒՅՈՒՄՉՅԱՆ***

***ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ, ՏԻՄ-Ի, ՀԿ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ***

քաղաքապետարան դիմած քաղաքացիները մերժում են ստանում: Աճուրդային կարգով այդ հողատարածքներն օտարելիս տնակային ավանի բնակիչները չեն հասցնում մասնակցել աճուրդին: Աճուրդի մասին տեղեկությունը հիմնականում չի հրապարակվում, իսկ լավագույն դեպքում` տպագրվում է աճուրդից 1-2 օր առաջ:

Վարդանանց 3-4-10 հասցեում օտարված հողատարածքների սեփականատերերը շինարարություն են սկսել: Նորակառույց մեծ պարիսպները զբաղեցրել են ամբողջ մայթը, զրկել տնակի բնակիչների տեղաշարժվելու հնարավորությունից:

## «ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ»

Տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և տնակային ավանի բնակիչների մասնակցությամբ քննարկումն անդրադարձավ տնակային ավանի բնակիչների խնդիրներին, դրանց լուծման տարբերակներին:

Տնակային ավանի բնակիչների հիմնական խնդիրները կապված են բնակարանի հետ, որոնք առանձնանում են.

- բնակիչների մի մասը բնակարան չի ունեցել մինչև 1988 թվականի երկրաշարժը: Նրանք գրանցված են եղել բնակարանի տրամադրման հերթացուցակներում, սակայն երկրաշարժից հետո բնակարանի տրամադրման նրանց հերթը չի պահպանվել: Ներկայումս նրանց բնակարանով ապահովելու ոչ մի ծրագիր կամ միջոցառում չկա:

- Բնակիչների մյուս մասը տնակներում հայտնվել է ոչ աղետի հետևանքով: Նրանք տեղափոխվել են այլ բնակավայրից կամ վաճառել իրենց բնակարանը: Սակայն փաստն այն է, որ այսօր նրանց բնակարանային խնդրի լուծման համար ոչ մի քայլ չի ձեռնարկվում, նրանք չեն ընդգրկվում բնակարանի տրամադրման ոչ մի հերթացուցակում:

- Բնակիչների մյուս մասն էլ տնակներում բնակվում է աղետի հետևանքով, և երկրաշարժից 18 տարի անց էլ նրանց բնակարանի խնդիրը լուծում չի ստացել: Քաղաքապետարանի որոշմամբ նրանց հատկացված տնակներում այդ բնակիչները ձեռք են բերել բնակվելու իրավունք: Այս ամբողջ ժամանակահատվածում տնակի բնակիչները վճարել են կոմունալ սպասարկման բոլոր վարձավճարները, հողի օգտագործման վճարները:

ՀՀ կառավարության թիվ 317 որոշման համաձայն` ընթանում է քաղաքը ժամանակավոր շինություններից ազատելու գործընթաց:

Վանաձորի քաղաքապետարանն այդ որոշման համաձայն` պահանջում է բնակիչներից ազատել տնակները 5 օրյա ժամկետում, իսկ չկատարելու դեպքում սպառնում է դիմել հարկադիր կատարման: Տնակի փոխարեն բնակիչներին քաղաքապետարանն առաջարկում է.



- տեղափոխվել և երկու տարի ժամանակով բնակվել հանրակացարաններում
- բնակարանի վարձակալության համար 2 տարի ժամանակով յուրաքանչյուր ամիս բնակչին տրամադրում է 10 հազար դրամ
- պատահել են դեպքեր, երբ քաղաքապետարանն ավագանու որոշմամբ բնակիչներին հատկացրել է բարձիթողի բնակարաններ: Սակայն պարզվել է, որ այդ հասցեում արդեն բնակվում են այլ քաղաքացիներ: Կամ էլ որոշումը կայացնելուց հետո այդ բնակարանները վաճառվել են:

Բնակիչների համար այդ տարբերակներից ոչ մեկն ընդունելի չէ: Նրանք քաղաքապետարանին դիմում են՝ ճանաչել տնակի հողատարածքի նկատմամբ սեփականության իրենց իրավունքը: Բնակիչների մի մասին քաղաքապետարանը պատասխանել է, որ այդ տարածքներն օտարման ենթակա չեն: Մինչդեռ, կազմակերպությանը տրամադրած տեղեկատվությամբ՝ պարզվում է, որ այդ տարածքները արդեն օտարվել են, բայց ոչ տնակի բնակիչներին:

ՀՀ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ և շարժական գույքն օտարվում է աճուրդի կարգով: Աճուրդի վերաբերյալ նախապես տարածվում է հայտարարություն, ազատվում է հողը, որոշվում նրա սահմանները, ապա նոր օտարվում: Քաղաքապետարանի կողմից տնակների տարածքներն օտարվել են առանց օրենքի այդ պահանջները կիրառելու: Տնակների բնակիչները դեռևս բնակվում են այդ օտարված հողատարածքում, նրանցից ոչ ոք աճուրդի հայտարարման մասին տեղյակ չէ:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

Տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով սեփական մոտեցումները Տեղական Ինքնակառավարման Մարմիններին ներկայացնելու համար բնակիչները մշակել են Վանաձոր համայնքի ավագանուն ներկայացվող առաջարկությունների փաթեթ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակում կայացած քննարկման արդյունքում գրասենյակի աշխատակիցների աջակցությամբ մշակվել և Վանաձոր համայնքի ավագանուն է ներկայացվել 8 առաջարկություն:

Վանաձոր համայնքի ավագանին տնակային ավանի բնակիչների ներկայացրած առաջարկությունները նրանց մասնակցությամբ քննարկելու նպատակով հրավիրել է ավագանու արտահերթ նիստ:

Հուլիսի 26-ին Վանաձորի քաղաքապետարանում կայացել է ավագանու արտահերթ նիստ:

Նիստի ընթացքում այդ  առաջարկությունները գրավոր ներկայացվեցին համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին:

Քաղաքապետարանի տեղեկատվությամբ ներկայումս Վանաձորի 1, 2, 3, 4, 7 տնակային ավաններում տեղադրված են համապատասխանաբար 94, 28, 28, 29, 7 տնակներ: Այդ տնակները, ըստ համայնքի ղեկավարի որոշման, ենթակա են տեղահանման՝ համաձայն ՀՀ Կառավարության 318 որոշման:

Ինչպե՞ս է տնօրինվելու այդ տնակների բնակիչների ճակատագիրը: Այս խնդրի լուծման համար քաղաքապետարանն առաջարկում է մի քանի տարբերակ.

1. Վարձակալության համար յուրաքանչյուր ամիս քաղաքապետարանը տրամադրում է 10 հազար դրամ 2 տարի ժամանակով:
2. Այդ բնակիչներին տեղափոխում է հանրակացարան:
3. Տնակը տեղափոխում է Վանաձորի Լենինգրադյան տնակային ավան:

Այս տարբերակներից ոչ մեկը տնակային ավանի բնակիչների համար ընդունելի չեն:

Տնակային ավանի բնակիչների մի մասն համառորեն պնդում է, որ պետք է ճանաչվի տնակի հողատարածքի նկատմամբ բնակչի սեփականության իրավունքը: Նրանք վկայակոչում են ՀՀ «Հողային օրենսգիրքը», «Քաղաքացիական օրենսգիրքը» և մեջբերումներ անում: «Պետության եւ համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են գյուղատնտեսական գործունեության համար եւ որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման եւ սպասարկման համար՝ սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային, երկրաշարժից տուժած եւ լքված բնավայրերում (ցանկը հաստատում է կառավարությունը) այն ընտանիքներին, որոնք նախկինում չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, չեն ստացել (ձեռք բերել) տնամերձ կամ բնակելի տան շինարարության եւ դրա սպասարկման համար հողամասեր»:

«Քաղաքացիական օրենսգրքի» 187 հոդվածը սահմանում է. «Քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրա-





վունք /ծեռքբերման վաղեմություն/: Քաղաքապետարանի իրավաբանի կողմից ՀՀ «Հողային օրենսգրքի» փոփոխությունների մեկնաբանությամբ այդ հողատարածքները կարող են օտարվել միայն աճուրդով: Տնակային ավանի բնակիչների կողմից տնակային ավանների տարածքները բնակարանաշինության համար հատկացնելու առաջարկության կապակցությամբ քաղաքապետը նշում է. «Համայնքի սեփականություն համարվող հողատարածքը, նույնիսկ համայնքային սեփականության բնակարաններ կառուցելու համար օտարվում է աճուրդով»: Բացի այդ, կարելի է մշակել բնակարանաշինության ծրագրեր, սակայն համայնքի բյուջեն սահմանափակ է, հայտնի չէ, թե ինչ միջոցներով հնարավոր կլինի իրագործել այդ ծրագիրը: Այդ առաջարկն ընդունելի է, բայց ոչ իրատեսական:

Համայնքի ենթակայության տակ գտնվող թալանված և քանդված բնակարանները տնակային ավանների բնակիչներին հատկացնելու առաջարկությունը և կարգը համայնքի ղեկավարն ու ավագանին արժանեցրին հավանության: Համայնքի ղեկավարն ու ավագանին տնակային ավանի բնակիչների հետ համաձայնության եկան այդ հարցի շուրջ:

Վանաձոր համայնքի ենթակայության տակ գտնվող 42 բնակարաններ հատկացվելու են տնակային ավանի բնակիչներին հետևյալ ընթացակարգով:

- Համայնքի սեփականության տակ գտնվող բնակարանները տնակային ավանի բնակիչներին հանձնելու քաղաքապետարանի կողմից կայացված որոշումը հաստատելու է Արդարադատության նախարարությունը:
- Որոշման հաստատումից հետո ձևավորվելու է բնակարանների բաշխման հսկողությունն իրականացնող հանձնաժողով:
- Բնակարանների բաշխումն իրականացվելու է՝ հաշվի առնելով տնակային ավանների բնակիչների կողմից մշակված կարգը:
- Քաղաքապետարանը համաձայն է և պատրաստ այդ բնակարանների վերանորոգման համար 1 տարվա ընթացքում յուրաքանչյուր ընտանիքի տրամադրել 240 հազար դրամ:
- Մինչև ՀՀ Արդարադատության նախարարության կողմից այդ որոշման հաստատումն ու որոշումն ուժի մեջ մտնելը դադարեցվում են տնակների տեղահանման աշխատանքները:

Համայնքի ղեկավարի և ավագանու կողմից տնակային ավանների բնակիչների կողմից ներկայացված առաջարկություններին 1 ամսվա ընթացքում կտրվի գրավոր պատասխան:

/Հավելված 17/

## «ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ»

Տնակային ավանի բնակիչների, Տեղական ինքնակառավարման մարինների մասնակցությամբ կայացած քննարկմանը անդրադառնում էր քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի բյուջեի հնարավորություններին:

Պատվիրակված լիազորությունների մասով պետական բյուջեից տարեկան 52 միլիոն դրամ է հատկացվում Վանաձորի կոմունալ տնտեսական և բարեկարգման բաժնին՝ համայնքի սանիտարական մաքրման համար: Այդ գումարն, ըստ բաժնի պետ Լյովա Կարապետյանի, բավարար չէ սանմաքրման աշխատանքներն ամբողջ ծավալով իրականացնելու համար:

Աղբահանության աշխատանքների համար ծախսերը բաժինն իրականցնում է բնակչի կողմից աղբահանության համար գանձվող վճարների միջոցով: Նախորդ ամսվա վարձավճարների միջոցով համայնքի տարբեր մասերում մեծ և փոքր աղբամաններ են տեղադրվել: Կենցաղային աղբահանությունից տնակի բնակիչները չեն բողոքում:

Ո՞վ է պատասխանատու տնակների տեղահանման հետևանքով գոյացած տեխնիկական և շինարարական աղբահանման համար:

Ո՞րն է տնակը քանդելուց կամ տեղափոխելուց հետո տնակի տարածքի մաքրման իրավական մեխանիզմը:

Լյովա Կարապետյանը նշում է, որ նման աշխատանքների իրակա-





նացման համար թաղամասային հիմնարկի ենթակայության տակ գտնվող համապատասխան բաժին է առանձնացվել: Քաղաքացին, տնակը տեղափոխելուց հետո պիտի սեփական նախաձեռնությամբ դիմի այդ բաժին, կատարի համապատասխան վճարումը, որպեսզի իրականացվեն մաքրման և աղբահանության աշխատանքներ: Ցավոք, նման աշխատանքների համար պետբյուջեից գումար չի տրամադրվում:

Տեղափոխված տնակի տարածքի բարեկարգման համար յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեից որոշակի գումար էր հատկացվում, սակայն այս տարի նման հատկացում չի եղել:

Կենցաղային աղբահանությունից, փողոցային լուսավորությունից, ջրափոսերի հեռացման և բարեկարգման աշխատանքներից բացի, տնակային ավաններում առկա կոմունալ խնդիրների համար պատասխանատու է Վանաձորի քաղաքապետարանի համատիրության և բնակարանային տնտեսության բաժինը:

Քննարկման երկրորդ մասում տնակային ավանի բնակիչները ներկայցրեցին այն հարցերը, որոնք նրանց առաջարկությամբ պիտի ընդգրկվել ավագանու հաջորդ նիստի օրակարգում:

Ավագանու նիստում տնակային ավանի բնակիչները խնդրում են քննարկել հետևյալ հարցերը.

- Վանաձորի քաղաքապետարանից պահանջել հաշվետվություն՝ ներկայացնել օտարված հողատարածքների, դրանց աճուրդների անց կացման, դրանց նպատակային նշանակության օգտագործման մասին:
- Տնակային ավանի տարածքներից մեկում առանձնացնել համայնքային ենթակայության տակ գտնվող բնակարանային ֆոնդ:

Այս առաջարկություններն ավագանու նիստի օրակարգում ընդգրկելու համար ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացվել է Վանաձոր համայնքի ավագանու բոլոր անդամներին անհատապես:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

Քննարկումը նվիրված էր համայնքի ենթակայության քանդված և թալանված բնակարանների բաշխմանն ու այդ գործընթացում տնակային ավանի բնակիչների մասնակցության հնարավորություններին:

2006թ հուլիսի 21-ի Վանաձոր համայնքի ավագանու որոշմամբ քանդված և թալանված բնակարանները անհատույց հանձնվելու են այն քաղաքացիներին, ովքեր կամովին պատրաստ են դրանք բարեկարգել:

Ավագանու անդամ Կարեն Ադամյանի համոզմամբ՝ տնակային ավանի բնակիչների համար սա բնակարան ձեռք բերելու ռեալ հնարավորություն է: Կարեն Ադամյանը տեղեկացրեց նաև, որ քաղաքապետարանի որոշմամբ բնակարանների բաշխմանն ու ձեռքբերմանը մասնակցելու էին միայն Քիմգործարանի տնակային ավանի բնակիչները: Սակայն ավագանու առաջարկությամբ բնակարանի բաշխման գործընթացում ներգրավվել են Վանաձորի բոլոր տնակային ավանների բանկիչները:

Այդ բնակարանների բաշխման գործընթացում, նրա կարծիքով, տնակային ավանի բնակիչները հնարավորություն ունեն մասնակցելու.

- բնակարանների բաշխման կանոնակարգի մշակմամբ
- այդ կանոնակարգին համապատասխան բնակարանների բաշխմանն անմիջական ներգրավվմամբ

Բացի այդ, տնակային ավանի բնակիչներն իրենք են փնտրելու և հայտնաբերելու համայնքի ենթա-



կայության քանդված և թալանված բնակարաններ:

Կարեն Ադամյանը տնակային ավանի բնակիչների հաջողության առաջնային նախապայման է համարում նրանց համախմբվածությունը:

Ներկայումս Վանաձորի քաղաքապետարանի կողմից քանդված բնակարանների բաշխման կանոնակարգը մշակման ընթացքի մեջ է: Մինչ այժմ տնակային ավանի բնակիչները հնարավորություն չեն ունեցել մասնակցել այդ կանոնակարգի մշակմանը քաղաքապետարանի աշխատակիցների հետ:

Տնակային ավանի բնակիչներն իրենց պատրաստակամությունն են հայտնում մասնակցել այդ կանոնակարգի մշակմանը:

Նրանք համաձայնեցին մինչև սեպտեմբերի 16-ը՝ ավագանու հաջորդ նիստն ընկած ժամանակահատվածում, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի աջակցությամբ մշակել բնակարանների բաշխման իրենց կանոնակարգը:

Տնակային ավանի բնակիչները ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների հետ կմասնակցեն ավագանու նիստին, որտեղ էլ գրավոր կներկայացվի բնակարանների բաշխման նրանց կողմից մշակված կանոնակարգը:

## «ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՏԻՄ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐ»

Վանաձորի թիվ 1, 2 ,3, 4, և 7 տնակային ավանի բնակիչների /186 ընտանիք/ բնակարանային խնդիրները անմիջական միջամտության կարիք են զգում:

Վանաձորի քաղաքապետարանը դատական հայց է ներկայացրել տնակների բնակիչների դեմ՝ տարածքի ազատման պահանջով: Ներկայումս մոտ 10 դատական նիստերն ավարտվել են ի օգուտ Վանաձորի քաղաքապետարանի: Դատարանի վճռով տնակի բնակիչները պարտավորվում են ազատել տնակի զբաղեցրած տարածքը, սակայն կացարան նրանց չի տրամադրվում:

Մինչդեռ, Վանաձորի քաղաքապետարանը մինչ այժմ չի տրամադրել ամբողջական տեղեկատվություն, թե երբ և ինչպես է կայացել այդ տարածքների օտարման աճուրդները և ովքեր են հանդիսանում այդ տարածքների սեփականատերերը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրված պատասխան գրության մեջ քաղաքապետարանը նշում է, որ «վերոհիշյալ տարածքներում կառուցվելու են հիվանդանոցային, ինչպես նաև սպորտային համալիրներ, մի մասն էլ աճուրդային եղանակով օտարվել են ՀՀ քաղաքացիներին»:

Տարածքների օտարման աճուրդների մասին տեղյակ չէ նաև Վանաձոր համայնքի ավագանին:

Չունենալով տարածքների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություն՝ իբր օրինական կերպով տեղահանում են բնակիչներին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը այս կապակցությամբ դիմել է Լոռու մարզի դատախազություն՝ կատարելու հետաքննություն՝ Վանաձորի տնակային 1, 2, 3, 4 և 7-րդ ավանների, առանձին հողատարածքների օտարման օրինականությունը պարզելու համար:

Միաժամանակ կազմակերպությունը առաջարկություն է ներկայացրել ավագանու անդամներին.

- Վանաձորի քաղաքապետարանից պահանջել հաշվետվություն՝ Վանաձորի տնակային թիվ 1, 2, 3, 4 և 7 տնակային ավանների օտարված հողատարածքների, դրանց օտարման նպատակով կայացած աճուրդի օրինականության, սեփականատերերի, հողատարածքների նպատակային նշանակության օգտագործման մասին:
- Քննարկել Վանաձորի թիվ 1, 2, 3, 4 և 7 տնակային ավանների տարածքում համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով հողատարածքների հատկացման հարցը, հնարավորության դեպքում տարածքների օգտագործման սխեմայում փոփոխություններ կատարելու մասին որոշման կայացման միջոցով:

Վանաձոր համայնքի ավագանին, իր հերթին, իր նախաձեռնությամբ, ուղերձ է հղել համահայկական ֆորումին՝ Վանաձորի 84 բնակելի շենքերի ամրացման խնդրանքով:



***ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ, ՏԻՄ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ***

***ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼՅՈՎԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***
***ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՔՈՒՆՑ***

Ավագանու ներկայացուցիչների կարծիքով տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման ռեալ հնարավորություն է համայնքի ենթակայության քանդված և թալանված բնակարանների բաշխումը:

«Հզոր հայրենիք» կուսակցության ներկայացուցիչ Վահան Ղուլումչյանն առաջարկում է դասակարգել տնակային ավանի բնակիչներին, ըստ բնակարանը կորցնելու պատճառի: Նրա կարծիքով, այդ բնակարանների բաշխման ժամանակ նախապատվությունը պետք է տալ այն բնակիչներին, ովքեր բնակարանը կորցրել են աղետի հետևանքով:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից Վանաձորի 135 տնակներում իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքները հնարավորություն են տալիս կատարել նման դասակարգում:

Վանաձորի հանրակացարաններում, որտեղ բնակվում են տնակային ավանների նախկին բնակիչներ, ուսումնասիրություն է իրականացվել նաև ՀՍԻԿ հասարակական կազմակերպության կողմից: Կազմակերպության ղեկավար Գևորգ Մանուկյանը տեղեկացրեց, որ այդ ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ Մարդու պաշտպանի հանձնարարությամբ, և առաջարկեց համատեղ մշակել Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվող առջարկությունների փաթեթը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը համոզված է, որ տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծման լավագույն տարբերակ կարող է հանդիսանալ անօթևան մնացած քաղաքացիների համար համայնքի ենթակայության ներքո բնակֆոնդի ձևավորումը:

Մտահոգիչ է այն, որ տնակային ավանի բնակիչների չլուցված խնդիրների պատճառը քաղաքացիական ակտիվության և վերահսկողության բացակայությունն է:

Այս կապակցությամբ մասնակիցները ներկայցնում են իրենց առաջարկությունները.

1. Ավագանու անդամաների կողմից ներկայացվի համայնքային բնակֆոնդի ձևավորման որոշման նախագիծ:

2. Բարձրացնել համայնքի ենթակայության հողերի օտարման օրինականության խնդիրը:

Մասնակիցների որոշմամբ հոկտեմեբերի 2-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակում կայանալու է հասարակական և քաղաքական կազմակերպությունների նոր հանդիպում: Հանդիպման ընթացքում մշակվելու է Լոռու մարզի դատախազությանն ու ՀՀ Կառավարությանն ուղղված ուղերձներ: Հասարակական, քաղաքակական կազմակերպությունների, քաղաքացիների անունից այդ ուղերձները պիտի ուղարկվեն համապատասխան մարմիններին:



23

## «ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ»

Հոկտեմբերի 23-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակում կայացավ տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանության նպատակով իրականացվող միջոցառումների ամփոփիչ հանդիպումը:

Մասնակից տնակային ավանի բնակիչները, հասարակական և քաղաքական կազմակերպության ներակայցուցիչները իրենց գնահատականը տվեցին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 6 ամիսների ընթացքում իրականացված միջոցառումներին:

Կազմակերպության ղեկավար Արթուր Սաքունցը կարևորում է բոլոր շահագրգիռ անձանց և կառույցների մասնակցությունը տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծման մեջ: Բայց նախաձեռնողը պիտի հանդիսանա բնակիչն ինքը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված միջոցառումների արդյունքները դիտարկվում են մի քանի ասպեկտով.



- կազմակերպության կողմից կազմակերպված քննարկումների արդյունքում բացահայտվեցին առկա խնդիրները, խնդիրների լուծման մոտեցումները:

- իրականացված հեռուստաեթերների արդյունքում, ըստ բնակիչների, համաքաղաքացիները ծանոթացան տնակային ավանի բնակիչների խնդիրներին: Տնակային ավանի բնակիչները կատակով հիշում են նաև, թե ինչպես եթերներից հետո փողոցում համաքաղաքացիները մոտեցել են, խրախուսել իրենց, որ մինչև վերջ պայքարեն:

- համագործակցություն ձևավորվեց տեղական ինքնակառավարման մարմինների առանձին ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների միջև:

Այնուամենայնիվ տնակային ավանի բնակիչների գնահատմամբ բնակիչներն իրենք բավականաչափ ակտիվություն չեն ցուցաբերել: Դա ունի մի քանի բացատրություն.

- պատժվելու վախը

- եկար ժամանակ չլուծված խնդրից հիասթափությունը

- անհատական շահերը, որոնց շնորհիվ հնարավոր է եղել լուծել մի քանի բնակչի բնակարանային խնդիրը: Ներկայումս Քիմիագործների թաղամասի թիվ 3 տնակային ավանում շատ քիչ ընտանիքներ են մնացել:

Միաժամանակ բնակիչները նշում են, որ անհրաժեշտ է շարունակել իրականացվող միջոցառումները: Նրանք առաջարկում են այս գործընթացի մեջ ընդգրկել առանձին անհատ գործարարների: Այդ միջոցով հնարավոր կլինի որոշակի ֆինանսական ներդրումներ ունենալ բնակարանաշինության մեջ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծման լուրջ ռեսուրս է համարում առաջիկա ԱԺ-ի ընտրությունները: Բնակիչները պիտի կարողանան գիտակցել, և համապատասխան թեկնածուի առջև բարձրացնել նրա պարտավորությունների, պատասխանատվության հարցը:

«Հայկական Հաբիթաթ» կազմակերպության ներկայացուցիչը գտնում է, որ տնակի բնակիչն ինքը պիտի քայլեր ձեռնարկի տնակային պայմաններից ազատվելու համար: Պետք չէ սպասել կամ պահանջներ ներկայացնել պետությանը: Բնակիչն ինքը պիտի միջոցներ հայթայթի, բնակարան ձեռք բերի:

Տնակային ավանի բնակիչները աշխատելուց, միջոցներ ստեղծելուց ու սեփական ուժերով բնակարան ձեռք բերելուց չեն բողոքում: Բայց պետությունը համապատասխան աշխատատեղերի հնարավորություն չի ստեղծում, ավելին՝ աղետի գոտու հետևանքով բնակարանը կորցրած քաղաքացիների համար ոչ մի կարգի փոխահատուցում չի նախատեսում: Պետության պահանջով տեղական ինքնակառավարման մարմիններն ի կատար են ածում ՀՀ Կառավարության 317 որոշմամբ նախատեսված տարածքները տնակից ազատելու պահանջը: Միևնույն ժամանակ նույն որոշմամբ սահմանված այդ աշխատանքների իրականացման համար նախատեսված 2004, 2005 և 2006թթ. ֆինանսական հատկացումները Լոռու մարզին չեն իրականացվել: «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» օրենքով նախատեսված հատկացումների մասով ևս պետությունն իր պարտավորությունները չի կատարում:

Այդ պատճառով էլ տնակային ավանի բնակիչների խնդիրների մասին ահազանգումը բնակչի կողմից սեփական շահերի պաշտպանության համար արվող առաջին քայլն է:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը բնակիչների հետ շարունակելու է նրանց շահերի պաշտպանության գործընթացը, որը նախատեսում է.

- պարզել տնակային ավանի առանձին հողատարածքների օտարման օրինականության հարցը

- նպաստել Վանաձորի քաղաքապետարանի կողմից համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդի ձևավորման ծրագրի մշակմանը:

- առաջարկություն ներկայացնել ՀՀ Կառավարություն թիվ 317 որոշման մեջ փոփոխությունների իրականացման կամ նոր որոշման կայացման համար

- համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդի ձևավորման և իրականացման համար դիմել ՀՀ Կառավարություն և այլ օտարերկրյա ներդրողների

- վերահսկողություն սահմանել համայնքի ենթակայության քանդված և թալանված բնակարանները տնակային ավանի բնակիչներին հանձնելու գործընթացի նկատմամբ:

- տպագրել և տարածել Վանաձորի տնակային ավանի բնակիչների, նրանց շահերի պաշտպանության համար իրականացված միջոցառումների մասին պատմող պաստառ և գրքույկ:





ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ, ՏԻՄ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

## ԻՐԱՎԱԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2006թ ապրիլի 1-ից հոկտեմբերի 1-ը ՀՔԱ Վանաձորի գրասենյակը անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել Վանաձորի տնակային ավանի շուրջ 180 բնակչի:

Իրավախորհրդատվությունը կազմակերպվել է թե՛ գրասեյակում, թե՛ տնակային ավանի տարածքներ այցելությամբ:

Իրականացված իրավախորհրդատվությունը հիմնականում առնչվել է բնակարանային /գրեթե 90 տոկոս/, սոցիալական իրավունքներին:

Քաղաքացիներին տրամադրվել է ոչ միայն բանավոր իրավախորհրդատվություն, այլև անմիջական միջոցառումներ են իրականացվել նրանց խախտված իրավունքը վերականգնելու համար: Մասնավորապես դիմում-պահանջներ է ներկայացվել տարբեր պետական մարմինների, իրականացվել է տնակային ավանի բնակչների շահերի դատական պաշտպանություն:

Բանկիչների աշխատանքային իրավունքի խախտման դեպքերն առնչվել են աշխատանքային պայմանագրի բացակայությանը:

Իրավախորհրդատվության արդյունքում տնակային ավանի բնակիչներն իրավական տեղեկատվություն են ստացել.

- բնակարանային

- սոցիալական իրավունքների

- «ՀՀ հողային օրենսգրքի»

- «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» վերաբերյալ:

Սա հնարավորություն է տվել տնակային ավանի բնակիչներին հասարակական քննարկումների, կլոր սեղանների, ուղիղ հեռուստաեթերների ընթացքում բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների, պետական այլ կառույցների գործողությունների օրինականությանն ուղղված հարցեր:

Տնակային ավանի բնակիչներից մի քանիսը կարողացել է ինքնուրույն պաշտպանել իր շահերը դատարանում, բողոքարկել Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

Իրավապաշտպանության մեջ առանձին մաս է կազմել Վանաձորի քաղաքապետարանի կողմից տնակի բնակիչների դեմ սկսված դատական գործընթացը:

Խնդիրը կայացել է նրանում, որ Վանաձորի քաղաքապետարանը 2002-2006թթ ընթացքում օտարել է համայնքի սեփականություն համարվող տնակային ավանների հողատարածքները: Ըստ քաղաքապետարանի՝ հողատարածքների օտարման գործընթացն իրականացվել է ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Սկզբում կայացվել է օտարման որոշում, հայտարարություն է տարածվել, այնուհետև տեղի է ունեցել աճուրդ:

Այսօր տնակների և տնակային ավանների տարածքում 41 կտոր հողատարածք հանդիսանում է ՀՀ քաղաքացիների /ըստ Վանաձորի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության/, ոչ Վանաձոր համայնքի սեփականություն:

Միևնույն ժամանակ, վաճառված հողատարածքները տնակներից ազատելու պահանջով կրկին հանդես է գալիս Վանաձորի քաղաքապետարանը, ոչ հողատարածքների նոր սեփականատերը: Այս կապակցությամբ Վանաձորի քաղաքապետարանը Լոռու մարզի առաջին ատյանի դատարան մոտ 20 հայցադիմում է ներկայացրել: Հայցադիմումներից 3-ի կապակցությամբ դատարանը կայացրել է վճիռ ի օգուտ քաղաքապետարանի, որի համաձայն տնակի բնակիչները պիտի ազատեն տնակի զբաղեցրած տարածքը: Դատական գործընթացը դեռևս շարունակվում է, տնակի մոտ 17 բնակիչների ճակատագրի վճռումը դեռևս կախված է դատարանի որոշումից:





## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Համաքաղաքացիների վերաբերմունքը տնակների, տնակային ավանի բնակիչների, նրանց խնդիրների վերաբերյալ պարզելու համար իրականացել է հասարակական հարցում 500 վանաձորցիների շրջանում մայիս և սեպտեմբեր ամիսներին:

Հարցման թեթիկն իր մեջ ներառել է 16 հարց, և հնարավորություն տվել հարցվողներին իրենց տեսակետն արտահայտել տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծման վերաբերյալ:

Հարցումն իրականացվել է տարբեր մասնագիտություն, զբաղմունք ունեցող 18 –ից մինչև 70 վանաձորցիների շրջանում, որոնք բնակվում են Վանաձորի տարբեր թաղամասերում՝ կենտրոնից մինչև ծայրամաս:

Մայիսին իրականացված հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ 500 վանաձորցիներից 350-ը հստակ պատկերացում ունի տնակային ավանների հասցեների մասին, և մատնանշում է Վանաձորի Քիմիագործների և Լենինգրադյան տնակային ավանները:

Հարցվողներից 373-ը/մոտ 75%-ը տնակում բնակվելու պատճառ է համարում երկրաշարժի հետևանքով բնակարանը կորցնելը:

Հարցման վերլուծությունը ցույց է տվել, որ վանաձորցիները տեղեկություն չունեն տնակային ավանի բնակիչների թվի, խնդիրների մասին:

Մասնավորապես հարցվողների մոտ 38% -ը տնակային ավանի բնակիչների թվին վերաբերող հարցի դիմաց լրացրել է «տեղյակ չեմ», իսկ 12%-ը կարծում է, թե տնակներում են բնակվում մոտ 500 վանաձորցի:

Տնակային ավանի բնակիչների խնդիրների շարքում ամենահաճախ մոտ /190/ հանդիպողը բնակարանայինն է:

Տնակային ավանի բնակիչների խնդիրների չլուծվածության պատճառ վանաձորցիների 79,4%-ը համարում է պետական անտարբերությունը: Այդ ցուցակը հաջորդաբար լրացնում են տնակային ավանի բնակիչների խնդիրների մասին տեղեկատվության բացակայությունը 23.4%-ը, հասարակական անտարբերությունը 16.8%, տնակային ավանի բնակիչների պասիվությունը 13.4%:

Հարցվողների 72%-ը կարևոր է համարում տնակային ավանի բնակիչների խնդիրները համայնքի համար, և բացատրում՝ «կենսամակարդակի բարձրացման համար» /18.4%/:

28%-ը գտնում է, որ համայնքի համար տնակային ավանի բնակիչների խնդիրները կարևոր չեն, քանի որ ոչինչ չի փոխվում /5.6%/, իշխանությունը լուծում է սեփական խնդիրները /4.6%/:

«Կարող է հասարակությունը որևէ ազդեցություն ունենալ տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծման մեջ» հարցին հարցվողների 59.4%-ը պատասխանել է «այո»:

Նրանցից 225-ը տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման համար առաջարկում է նրանց բնակարան տրամադրել:

Երկրորդ հարցումն իրականացվել է սեպտեմբերին՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանության նպատակով իրականացված միջոցառումներից հետո:

Այս հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ կազմակերպության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում վանաձորցիները ավելի շատ տեղեկություն ունեն տնակային ավանի բնակիչների մասին:

Հենց հարցվողները իրենք գտնում են, որ իրականացվող միջոցառումները նպաստել են իրենց իրազեկման մակարդակի բարձրացմանը զգալի չափով /24%/, որոշ չափով /42%/:

Բնակիչների տեղեկատվության ստացման աղբյուրի ցուցակում անձնական շփումներից հետո /63%/ երկրորդ տեղը զբաղեցնում է տեղական հեռուստատեսությունը 35%:

Բնակիչներից 56%-ը տեղյակ է, որ տնակային ավանի բնակիչները մասնակցություն են ունեցել իրենց շահերի պաշտպանության համար իրականացվող միջոցառումներում:

24.2%-ը գտնում է, որ նրանց խնդիրների լուծման գործում այդ մասնակցությունը զգալի ազդեցություն է ունեցել՝ պետական մարմինները վերջապես նրանց վրա էլ ուշադրություն դարձրեցին, նրանց խնդիրների մասին ավելի շատ են խոսում:

10.8%-ը համարում է, որ այդ մասնակցությունը ոչ մի ազդեցություն չի ունեցել, քանի որ ոչինչ չի փոխվել:

Հարցվողների 47%-ը պատասխանել է, որ Վանաձորում տնակնե-



րում ապրում է 1000-ից ավել քաղաքացի:

Տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդիրը հարցվողների կարծիքով այս անգամ էլ առաջնայինն է 54.4%: Միևնույն ժամանակ, երկրորդ հարցման մեջ վանաձորցիները մեծ կարևորություն են տալիս տնակային ավանի բնակիչների առողջական 17.8%, կոմունալ, կենցաղային 18.1% խնդիրներին:

Տնակային ավանի խնդիրներով զբաղվող կառույցների շարքում վանաձորցիները հերթականությամբ թվում են` Վանաձորի քաղաքապետարան 39.6%, հասարակական կազմակերպություններ,- 34.8%, Վանաձոր համայնքի ավագանի 22%:

/Հավելված 14/

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Վանաձորի Քիմիագործների թաղամասի տնակային ավանի բնակիչների առկա խնդիրների ուսումնասիրության արդյունքում ձևավորվել է համակարգված տեղեկատվական բազա:

Ուսումնասիրության արդյունքները տեղեկություն են պարունակում Վանաձորի Քիմիագործների թաղամասի թիվ 1, 2, 3, 4, 7-րդ տնակային ավանների 135 ընտանիքների մասին:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ բնակիչները տնակում ապրում են միջինը 7 տարի, մինչդեռ մետաղյա տնակների շահագործման ժամկետը 5 տարի է:

Միջինը 3 անձից բաղկացած ընտանիքը ապրում է 21 մ² մետաղյա տնակում: Տնակի մաս կազմող խոհանոցն ու սանհանգույցը բնակիչներն ավելացրել են սեփական ուժերով: Շատ տնակներում բացակայում է ջրի խողովակաշարը, համապատասխան միացումները: Տնակի բնակիչների մեծ մասը ստիպված է ջուրը դրսից դույլերով տնակի ներս տեղափոխել:

2002թ տնակի հասցեում բնակչին չեն հաշվառում:

Հաշվառման խնդիրը տնակային ավանի բնակիչների համար այսօր դարձել է փաստացի անլուծելի խոչընդոտ, շատ այլ խնդիրների պատճառ: Տնակային ավանի բնակիչների մի մասը ունի տնակի հասցեի մշտական, անժամկետ հաշվառում: Որոշ մասը ժամանակավոր հաշվառում, որի ժամկետն արդեն վերջացել է:

Ընտանիքի այն անդամները, ովքեր ծնվել են կամ չափահաս դարձել տնակում, չունեն ոչ մի կարգի հաշվառում, ո՛չ ծննդյան վկայական, ո՛չ անձնագիր: Ստացվել է այնպես, որ միևնույն տնակի, ընտանիքի անդամների մի մասն ունի հաշվառում, մյուս անդամները` ոչ:

Տնակում ծնված կամ տնակում ապրող երեխաների մոտ առկա են այնպիսի հիվանդություններ, որոնք, ըստ մասնագետների, տնակում բնակվելու հետևանք են: Այդ երեխաներին բժիշկները խորհուրդ են տալիս փոխել բնակարանային պայմանները, ավելի լուսավոր և թթվածնով հարուստ սենյակ տեղափոխվել:

Ընդհանուր առմամբ, տնակներում ապրող ընտանիքների մոտ առկա են 32 տեսակ հիվանդություններ: Որոշ հիվանդությունների առկայությամբ տնակի բնակչի համար կարող է հաշմանդամության խումբ սահմանվել: Հաշվառման բացակայությունը հնարավորություն չի տալիս տնակի բնակչին հաշմանդամության խումբ սահմանել, օգտվել համապատասխան անվճար բուժսպասարկումից:

Ընտանիքների հիմնական եկամուտ է համարվում նպաստն ու կենսաթոշակը: 135 ընտանիքներից միայն 17-ի եկամտի մաս է կազմում աշխատավարձը:

3 անձից բաղկացած ընտանիքը տնօրինում է ամսական միջինը 21700 դրամ: Այդ միջոցներով բնակիչները ստիպված են հոգալ սննդի, կոմունալ վճարների հոգսը:

Տնակային ավանի բնակիչների սննդի օրակարգում հիմնական բաղկացուցիչներ են համարվում հացը, շաքարավազը, մակարոնեղենը: Բանջարեղեն, միրգ, կաթնամթերք բնակիչներն օգտագործում են շաբաթը մեկ անգամ: Բնա-





*ՎԱՆԱՁՈՐԻ ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ՏՆԱԿ*



կիչների օրակարգում մեծղեն հայտնվում է ամիսը մեկ անգամ:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ տնակային ավանի բնակիչները կատարում են կոմունալ գրեթե բոլոր վճարումները:

Պետությունը տնակի բնակիչների սոցիալական աջակցության համար ոչինչ չի նախատեսում: Տնակի բնակիչների մի մասը, որպես ՀՀ քաղաքացի, հաշվառված են սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակում, և ստանում են ամենամսյա ընտանեկան նպաստ: Այն դեպքում, երբ պետության պարտավորությունները սոցիալապես նման խոցելի խմբերի նկատմամբ կրկնապատկվում է:

/Հավելված 18/

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ունի տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանության, նրանց բնկարանային խնդրի լուծման սեփական մոտեցումը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման համար կազմակերպությունն առաջարկում է ձևավորել համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդ: Այսինքն՝ սկսել բնակարանաշինություն:

Նախատեսված բնակարանները համարվելու են ոչ թե անհատների, /տվյալ դեպքում տնակային ավանի բնակիչների սեփականությունը/, այլ համայնքի: Համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդի առկայությունը հնարավորություն կտա լուծել ոչ միայն տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդիրը, այլ այն բոլոր քաղաքացիների, ովքեր կհայտնվեն կացարան չունենալու վտանգի առջև:

Բնակարանաշինության, տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման համար կազմակերպությունը դիմել է «Հայկական Հաբիթաթի» Ազգային գրասենյակ:

Ապրելու ուրիշ տեղ չունեցող բնակիչների բնակարանային խնդրի լուծման համար ակնկալվում է «Հայկական Հաբիթաթի» հնարավոր աջակցությունը:

Կազմակերպությունը ուսումնասիրություններ է իրականացրել նաև բնակարանային խնդրի լուծման նպատակով ՀՀ Կառավարության կողմից տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման ուղղությամբ: ՀՀ Կառավարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2004-2006թթ՝ Լոռու մարզպետարանին համապատասխան հատկացումներ չեն արվել: Ներկայումս կազմակերպությունը ՀՀ Կառավարությունից տեղեկատվություն է ակնկալում իրականացված աշխատանքների արդյունքների վերաբերյալ:

Բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով կազմակերպությունը նախատեսում է համագործակցել տեղական և միջազգային ֆոնդերի հետ՝ համայնքի բյուջե համապատասխան ներդրումներ ունենալու համար:





## ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

2002թ մայիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը առանձին գործընթաց է սկսել տնակային ավանի առանձին հողատարածքների օտարման օրնականությունը պարզելու նպատակով:

Կազմակերպությունը գտնում է, որ 2002-2005թթ Վանաձորի տնակային ավանների առանձին հողատարածքների օտարումն իրականացվել է ՀՀ օրեսդրության նպատակային խախտումներով: Մասնավորապես օտարվել են ծանրաբեռնված հողատարածքներ: Այսինքն՝ այն տարածքները, որտեղ դեռևս տեղադրված են տնակները:

Կազմակերպության կողմից Վանաձորի քաղաքապետարանին ուղղված տարբեր գրությունների պատասխանները /մոտ 5/ հավաստի տեղեկություն չեն հաղորդում այդ հողատարածքների նպատակային օգտագործման, դրանց սեփականատերերի, համայնքի ավագանու կողմից այդ տարածքների օտարման նպատակով կայացված որոշումների մասին:

Կազմակերպության ուսումնասիրություններից պարզվել է, որ առանձին հողատարածքներ օտարվել են հենց քաղաքապետարանի աշխատակիցներին:

Արդյունքում, Վանաձորի տնակային ավանի շատ բնակիչներ վտարվում են իրենց ժամանակավոր կացարաններից, առանձ կացարանի այլ տարբերակ ունենալու:

Առկա փաստերի հիմքով կազմակերպությունը դիմել է Լոռու մարզի դատախազություն /հավելված 9/՝ հողատարածքների օտարման օրինականությունը պարզելու, մեղավոր անձանց պատժելու համար: Լոռու մարզի դատախազությունից մինչ օրս կազմակերպությունը որևէ տեղեկություն չի ստացել իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Միաժամանակ կազմակերպությունը առաջարկություն է ներկայացրել Վանաձոր համայնքի ավագանուն /Հավելված 8/:

Վանաձորի քաղաքապետարանից պահանջել հաշվետվություն՝ Վանաձորի տնակային թիվ 1, 2, 3, 4 և 7 տնակային ավանների օտարված հողատարածքների, դրանց օտարման նպատակով կայացած աճուրդի, օրինականության, սեփականատերերի, հողատարածքների նպատակային նշանակության օգտագործման մասին:

Քննարկել Վանաձորի թիվ 1, 2, 3, 4 և 7 տնակային ավանների տարածքում համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով հողատարածքների հատկացման հարցը, հնարավորության դեպքում տարածքների օգտագործման սխեմայում փոփոխություններ կատարելու մասին որոշման կայացման միջոցով:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը շարունակելու է տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանությունը, և այդ խնդրի լուծման նպատակով նախատեսում է հետևյալ գործողությունները.

- պարզել տնակային ավանի առանձին հողատարածքների օտարման օրինականության հարցը

- նպաստել Վանաձորի քաղաքապետարանի կողմից համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդի ձևավորման ծրագրի մշակմանը

- առաջարկություն ներկայացնել ՀՀ Կառավարություն թիվ 317 որոշման մեջ փոփոխությունների կամ նոր որոշման կայացման համար

- համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդի ձևավորման և իրականացման համար դիմել ՀՀ Կառավարություն և այլ օտարերկրյա ներդրողների

- Վերահսկողություն սահմանել համայնքի ենթակայության քանդված և թալանված բնակարանները տնակային ավանի բնակիչներին հանձնելու գործընթացի նկատմամբ:





# ՄԱՍ 2

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ, ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

7.09.2006թ.

Վանաձորի քաղաքապետ
Սամվել Դարբինյանին

Հարգելի պրն Դարբինյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

«Լքված և թալանված բնակարանների հետագա տնօրինման մասին» Վանաձոր համայնքի ավագանու թիվ 82-Ն որոշման պատճեն:
Լքված և թալանված բնակարանների հասցեները:
Լքված և թալանված բնակարանների բաշխման կանոնակարգի նախագիծը:

Հարգանքներով՝

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

377200 Վանաձոր, Հայքի հրապարակ — ☎ 4-45-33, 2-26-48, Ֆաքս / Fax 2-22-50

079N.6008 22 սեպտեմբերի 2006թ. — Ձեր N 079/3027 առ « 08 » 09 2006թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Ձեզ է տրամադրվում «Լքված և թալանված բնակարանների հետագա տնօրինման մասին» Վանաձորի համայնքի ավագանու 2006թ. հուլիսի 21-ի թիվ 82-Ն որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ լքված և թալանված բնակարանների հասցեները դեռևս ճշտվում են, իսկ դրանց բաշխման կանոնակարգի նախագիծը գտնվում է մշակման ընթացքում:

Առդիր՝ 1 թերթ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 21» հուլիսի 2006թ. **ՈՐՈՇՈՒՄ** թիվ 82-Ն

ԼՔՎԱԾ ԵՎ ԹԱԼԱՆՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով բազմաբնակարան շենքերում Վանաձորի համայնքի սեփականություն համարվող լքված և թալանված բազմաթիվ բնակարանների առկայությունը, որոնք բարեկարգ չեն համարվում և որպես բնակելի տարածություն քաղաքացիներին կարող են հատկացվել միայն սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին համապատասխանեցնելուց հետո, ինչն անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ներկայումս հնարավոր չէ, ելնելով նշված բնակարանները բարեկարգելու, այդպիսի բնակարաններ ունեցող շենքերի պատշաճ շահագործումը և պահպանումն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

Վանաձորի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել, որ բազմաբնակարան շենքերում Վանաձորի համայնքի սեփականություն համարվող լքված և թալանված բնակարանները կարող են անհատույց օգտագործման հանձնվել այն քաղաքացիներին, ովքեր կամովին պատրաստակամություն կհայտնեն դրանք բարեկարգել և համապատասխանեցնել սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին:
2. Սույն որոշման առաջին կետում նշված բնակարանները քաղաքացիներին անհատույց օգտագործման հանձնելու կարգը հաստատում է համայնքի ավագանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՐԲԻՆՅԱՆ





## ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

7.09.2006թ.

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Մանուկ Թոփուզյանին

Հարգելի պրն Թոփուզյան

Դիմում եմ Ձեզ՝ ըստ ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի, տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի մասին.

ՀՀ կառավարության 2002թ ապրիլի 1-ի թիվ 317 որոշման համաձայն՝ տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու նպատակով իրականացվող աշխատանքների համար պետբյուջեից և այլ արտաբյուջետային աղբյուրներից ո՞րքան գումար է հատկացվել Լոռու մարզին, մասնավորապես Վանաձոր քաղաքին:

Ո՞ր ծրագրի հիման վրա է իրականացվել այդ հատկացումը և ու՞մ կողմից է մշակվել /համայնքապետարանի, թե ՀՀ Կառավարության/:

Համաձայն ՀՀ «տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/:

Հարգանքներով՝

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց







## ՀԱՎԵԼՎԱԾ 2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ք.Վանաձոր, Հայքի հրապարակ — Հեռ. 4-61-92, Fax 2-28-77

N. 074/1591 01

«12» 07 2006 թ.

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 26.06.06թ. թիվ 107-4106 գր.

Հարգելի պարոն Սաքունց

«Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրում ընդգրկված բնակավայրերի վերականգնման ենթակա տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և դրանք հեռացնելու միջոցառումների մասին» 2002թ. ապրիլի 1-ի թիվ 317 որոշմամբ հաստատված է վերը նշված գործընթացների իրականացման կարգը, իսկ նույն որոշման Է/ կետով սահմանված է, որ աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում համայնքների վարչական սահմաններում ընդգրկված, վերականգնման ենթակա տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և դրանք հեռացնելու աշխատանքներն իրականացվում են, ինչպես նաև քաղաքացիներին պետական ֆինանսական աջակցություն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների ու արտաբյուջետային աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերով այդ նպատակների համար նախատեսված հատկացումների սահմաններում:

Վերը նշված նպատակներով, ՀՀ պետական բյուջեից կատարված հատկացումների շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանի պատվիրատվությամբ մարզում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

2002թ. ՀՀ պետական բյուջեով Վանաձոր քաղաքի ժամանակավոր տնակների ապամոնտաժման և տեղափոխման ծրագրով Լոռու մարզպետարանին հատկացվել է 15.0 մլն.դրամ, Սպիտակ քաղաքում «Լինսի-3» ծրագրով կառուցվող բ/շենքերի տարածքի տնակների մաքրում և տարածքի իրացում ծրագրով հատկացվել է 13.0 մլն.դրամ:

2003թ. ՀՀ պետական բյուջեով Սպիտակ քաղաքի «Կենտրոն-3» թաղամասի «Լինսի» ծրագրով կառուցվող 1-ին փուլի բ/շենքերի տարածքի տնակների հեռացում ծրագրով Լոռու մարզպետարանին հատկացվել է 5.0 մլն.դրամ, Վանաձորի Երևանյան խճ. թիվ 90 հասցեում գտնվող հանրակացարանի վերանորոգման աշխատանքների համար 22.0 մլն.դրամ, որտեղ տեղավորվել են ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած, մշտական բնակության վայր չունեցող ընտանիքներ:

2004; 2005 և 2006թթ. այդ նպատակների համար ՀՀ պետական բյուջեից Լոռու մարզպետարանին համապատասխան հատկացումներ չեն արվել:

Ինչ վերաբերվում է Վանաձորի քաղաքապետարանի կողմից իրականացված աշխատանքներին, կից ներակայացվում է քաղաքապետարանի կողմից ներկայացված համապատասխան տեղեկանքը:

Առդիր՝ 1 էջ:

ՄԱՐԶՊԵՏ — Հ.ՔՈՉԻՆՅԱՆ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

377200 Վանաձոր, Հայքի հրապարակ — ☎ 4-45-33, 2-26-48
E-mail: Vanadzor @arminco.com — Ֆաքս / Fax 2-22-50

N._____ «___» *հուլիս* 2006թ. — Ձեր N._____ առ «___» _____ 2006թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Կառավարության 2002թ.-ի ապրիլի 1-ի թիվ 317 որոշման համաձայն տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու նպատակով իրականացվող աշխատանքների համար պետբյուջեից և այլ արտաբյուջետային աղբյուրներից Վանաձոր քաղաքին 2002թ.-ից մինչ 2006թ. հուլիս ամիս գումար չի հատկացվել:

ՔԱՂԱՔԱՊԵՏ — Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կատարող *Ա. Սուքիասյան*
Հեռ *2-24-93*



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

17 հոկտեմբերի, 2006

ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար
Մ. Թոփուզյանին

Հարգելի պրն Թոփուզյան

2001 հուլիսի 27-ին ընդունված «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» օրենքի շրջանակներում Վանաձորում գրանցվել է ոչ աղետի հետևանքով տնակում բնակվող մշտական բնակության վայր չունեցող 550 ընտանիք: Նույն օրենքի շրջանակներում հաշվարկվել է Վանաձորում վերականգնման համար անհրաժեշտ հետևյալ ծավալները.

| | Բնակարանի քանակը/հատ | Ներդրումները/մլն դրամ | 2001թ Բնակարանի քանակը/հատ | 2001թ Ներդրումները/մլն դրամ | 2002թ Բնակարանի քանակը /հատ | 2002թ Ներդրումները/մլն դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| բնակարանների գնում | 333 | 713.2 | 125 | 240.6 | 208 | 472.6 |
| բնակելի տների վերականգնում | 327 | 1494.2 | 0 | 0 | 327 | 1494.2 |
| բնակարանների վերականգնում | 20 | 16.2 | 20 | 16.5 | 0 | 0 |
| ոչ աղետի հետևանքով տնակում բնակվող մշտական բնակության վայր չունեցող ընտանիքի աջակցություն | 550 | 132.0 | 0 | 0 | 550 | 132.0 |
| ընտանիքի մի մասի կողմից նախկինում զբաղեցրած բնակարանի չափից ոչ պակաս ստացած հերթագրված ընտանիքների աջակցություն | 432 | 432.0 | 0 | 0 | 432 | 432.0 |

ՀՀ 2003-2005թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում նկարագրվում է աղետի գոտում ներդրումների ֆինանսավորման հետևյալ աղբյուրներն ու փաստացի արդյունքները.

| Ցուցանիշներ | Փաստ | | | Ընդամենը | Ծրագիր | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1999 | 2000 | 2001 | 1999-2001 | 2002 | 2003 |
| Ընդամենը ներդրումներ, այդ թվում | 7538 | 10939 | 8205 | 26682 | 35619 | 34218 |
| Պետական բյուջե, այդ թվում | 3751 | 8680 | 5001 | 17432 | 6798 | 5726 |
| ՍՄ+ բյուջե | 3463 | 8486 | 4300 | 16249 | 2505 | 0 |
| ՀԲ առողջապահության ծրագիր | 0 | 0 | 0 | 0 | 200 | 0 |
| ՀԲ ԴԲԾ* | 0 | 0 | 0 | 0 | 300 | 0 |
| Արտաբյուջետային միջոցներ, այդ թվում | 3787 | 2259 | 3204 | 9250 | 28821 | 28942 |
| Կարմիր խաչ | 3243 | 1141 | 1200 | 5584 | 0 | 0 |
| Հանքսմանի հիմնադրամ | 30 | 512 | 300 | 842 | 500 | 0 |
| Համահայկական հիմնադրամ | 260 | 336 | 663 | 1259 | 569 | 0 |
| Լինսի հիմնադրամ | 0 | 0 | 559 | 559 | 19625 | 0 |
| ԱՄՆ ՄԶԳ | 0 | 270 | 202 | 472 | 8100 | 0 |
| Այլ | 254 | 0 | 280 | 534 | 0 | 0 |
| Ընդամենը բոլոր աղբյուրներից /մլն ԱՄՆ դոլար/ | 14.1 | 20.3 | 14.8 | 49.1 | 62.1 | 58.5 |
| ՀՆԱ % | 0.76 | 1.06 | 0.70 | 0.84 | 2.70 | 2.35 |

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի` խնդրում եմ տրամադրել տեղեկություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

*- «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» օրենքով նախատեսված ներդրումները Վանաձորում ի՞նչ չափով է իրականացվել:*
*- Այդ ներդրումների շնորհիվ Վանաձորում ի՞նչ ծրագրեր են իրականացվել:*
*- Ո՞վ է եղել այդ ծրագրերի հեղինակն ու իրականացնողը:*
*- Իրականացված ծրագրերի և ներդրումների արդյունքում բնակարանի կարիք ունեցող քանի՞ ընտանիք է բնակարան ստացել, մասնավորապես ոչ աղետի հետևանքով տնակում բնակվող մշտական բնակության վայր չունեցող ընտանիք:*
*- ՀՀ 2003-2005թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված ներդրումներից ինչքա՞նն է իրականացվել Վանաձորում:*
*- Ի՞նչ ծրագիր է իրականացվել Վանաձորում այդ ներդրումների հաշվին:*
*- Ի՞նչ արդյունքներ են ստացվել այդ ծրագրի իրականացումից /բնակարանի կառուցում, վերանորոգում/:*
*- Ի՞նչ ծրագրեր է նախատեսում ՀՀ Կառավարությունը ոչ աղետի հետևանքով ներկայումս տնակում բնակվող մշտական բնակության վայր չունեցող ընտանիքների բնակարանային խնդրի լուծման համար:*

Հարգանքներով`

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

14.07.2006թ.

Վանաձորի քաղաքապետ
Սամվել Դարբինյանին

Հարգելի պրն Դարբինյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ կրկին դիմում եմ Ձեզ՝ տրամադրելու լրացուցիչ տեղեկություն և պարզաբանում հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Ոչ հիմնական շինություններում բնակվող քանի՞ ընտանիքի հետ է կնքվել ՀՀ Կառավարության թիվ 317 որոշման 6-րդ կետով նախատեսված քաղաքացիներին բնակտարածությամբ ապահովելու պայմանագիր: Խնդրում եմ տրամադրել նաև այդ պայմանագրի օրինակելի ձևի պատճենը:
2. Տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու աշխատանքները կանոնակարգելու նպատակով յուրաքանչյուր տարածքի համար կազմված սխեմայի պատճենը /ներառյալ գրաֆիկական և աղյուսակային մասերը/:
3. Ովքե՞ր են հանդիսանում ոչ հիմնական շինություններից ազատված տարածքների սեփականատերերը:

Միաժամանակ հիշեցնում եմ, որ Վանաձորի քաղաքապետարանի բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժինն առանձին իրավաբանական անձ չի համարվում, և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով պահանջվող վերոհիշյալ տեղեկատվությունը պաշտոնական գրությամբ տրամադրելու է Վանաձորի քաղաքապետը:

**Հարգանքներով՝**

Կազմակերպության նախագահ [signature] Ա. Սաքունց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

377200 Վանաձոր, Հայքի հրապարակ

4-45-33, 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

039/4851 «10» օգոստոսի 2006թ.

Ձեր N 079/2387 առ «14» 07 2006թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊՐՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Տ.Մեծի պողոտա, թիվ 59

Կրկին Ձեզ տեղեկացվում է, որ ի կատարումն ՀՀ կառավարության թիվ 317 որոշման հիմնադրույթների՝ Վանաձորի համայնքում աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ոչ հիմնական շինություններից ազատվում են թիվ 1, 2, 3, 4 և 7 տնակային ավանները:

Նկատի ունենալով, որ վերոհիշյալ տնակային ավանները միշտ ունեցել են կոնկրետ սահմաններ, մասնավորապես՝

- թիվ 1 Նալբանդյան, Զորյան ,Բաթումի, Վարդանանց փողոցներով շրջափակված
- թիվ 2 ,3 Շիրակացի, Զորյան, Նալբանդյան, Վարդանանց փողոցներով շրջափակված
- թիվ 4 Նալբանդյան, Վարդանանց, Բաթումի փողոցներով շրջափակված
- թիվ 7 Բանյոյի փողոցով և մասնավոր սեկտորով շրջափակված,

ապա ոչ հիմնական շինություններից ազատվող տարածքների գրաֆիկական և աղյուսակային տվյալները վերոհիշյալ տնակային ավաններինն են:

Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության թիվ 317 որոշման հիմնադրույթների համաձայն՝ ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների կողմից վարձակալվող բնակարանների վարձակալական պայմանագրերը պետք է ունենային նոտարական հաստատում և պետռեգիստրում հաշվառվեին, որը վարձակալված բնակարանների սեփականատերերի կողմից չիրականացվեց, ապա ֆինանսական աջակցություն տրվում է համայնքային միջոցներից՝ հիմք ընդունելով բնակչի և սեփականատիրոջ հայտարարությունը սեփականություն չունենալու և տնակի տարածքի ազատման վերաբերյալ տեղեկանքները, իսկ ՀՀ կառավարության միջոցներով վերակառուցվում են հանրակացարաններ /մինչ այս վերակառուցվել է Երևանյան խճ. թիվ 90 հանրակացարանը. շինարարական աշխատանքները 21 760 000 դրամ/ և նախատեսված է վերակառուցել Երևանյան խճ. թիվ 92 հանրակացարանը:

Ժամանակավոր բնակտարածությամբ ապահովման գրավական է հանդիսանում, համաձայն բնակչի դիմումի, Վանաձորի քաղաքապետի՝ ֆինանսական աջակցություն հատկացնելու կարգադրությունը և հանրակացարանում բնակմակերես հատկացնելու մասին որոշումը ( օրինակները Ձեզ տրամադրվել են):

Համաձայն աղետի գոտու վերականգնման ծրագրի՝ վերոհիշյալ տարածքներում կառուցվելու են հիվանդանոցային, ինչպես նաև՝ սպորտային համալիրներ, մի մասն էլ աճուրդային եղանակով օտարվել են ՀՀ քաղաքացիներին:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կատ.՝ Գ. Պառավյան
հեռ. 2-58-92



## ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

10.07.2006թ.

Վանաձորի քաղաքապետ
Սամվել Դարբինյանին

Հարգելի պրն Դարբինյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել Վանաձորի Տեղական Ինքնակառավարման Մարմինների կողմից կայացված հետևյալ որոշումների պատճենները.

1. Վանաձորի Վարդանանց 4-5-1, Վարդանանց 4-2-29, Վարդանանց 4-2-11, Վարդանանց 4-2-14, Վարդանանց 4-2-3, Վարդանանց 1-6-12, Սպանդարյան 1-3-11 հասցեների հողատարածքներն աճուրդով օտարելու մասին Վանաձորի ավագանու որոշման պատճենը:

2. Վերոհիշյալ տարածքներն օտարելու մասին քաղաքապետի որոշման պատճենը, պայմանագրի պատճենը:

Հարգանքներով՝

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

377200 Վանաձոր, Հայքի հրապարակ
☎ 4-45-33, 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

079/4457 «19» հուլիսի 2006թ.

Ձեր N 079/2300 «10» 07 2006թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՊՐՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Տ.Մեծի թիվ 59

Վանաձորի Վարդանանց թիվ 4-5-1, Վարդանանց թիվ 4-2-29, Վարդանանց թիվ 4-2-11, Վարդանանց թիվ 4-2-14, Վարդանանց թիվ 4-2-3, Վարդանանց թիվ 1-6-12, Սպանդարյան 1-3-11 հասցեներով հողատարածքներն աճուրդով օտարելու մասին Վանաձորի ավագանու որոշում երբևէ չի կայացվել:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կատ. Գ. Պառավյան
հեռ. 2-58-92



ՀԱՎԵԼՎԱԾ 6

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

21.07.2006թ.

Վանաձորի քաղաքապետ
Սամվել Դարբինյանին

Հարգելի պրն Դարբինյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել լրացուցիչ տեղեկություն և պարզաբանում հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Ոչ հիմնական շինություններում բնակվող քանի՞ ընտանիքի հետ է կնքվել ՀՀ Կառավարության թիվ 317 որոշման 6-րդ կետով նախատեսված քաղաքացիներին բնակտարածությամբ ապահովելու պայմանագիր: Խնդրում եմ տրամադրել նաև այդ պայմանագրի օրինակելի ձևի պատճենը:
2. Տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու աշխատանքները կանոնակարգելու նպատակով յուրաքանչյուր տարածքի համար կազմված սխեմայի պատճենը /ներառյալ գրաֆիկական և աղյուսակային մասերը/:
3. Ովքե՞ր են հանդիսանում ոչ հիմնական շինություններից ազատված տարածքների սեփականատերերը:

Տեղեկացնեմ նաև, որ 07.06.06-ին մեր կազմակերպության կողմից քաղաքապետարան ուղարկված հարցման հունիսի 19-ի պատասխան-գրությունը չի ներառում վերոհիշյալ հարցերի պատասխանները:

Հարգանքներով՝

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

377200 Վանաձոր, Հայքի հրապարակ
E-mail: Vanadzor @arminco.com

4-45-33, 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

079 N 4259 « 10 » հուլիսի 2006թ.

Ձեր N 079/2053 առ « 21 » 06 2006թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում եմ, որ տեղեկություններ և պարզաբանումներ նշված հարցերի վերաբերյալ Դուք կարող եք ստանալ բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնից (թիվ 220 և 222 սենյակներ):

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

07.06.2006թ.

Վանաձորի քաղաքապետ
Սամվել Դարբինյանին

Հարգելի պրն Դարբինյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. ՀՀ Կառավարության թիվ 317 որոշման իրականացման ժամանակ քանի՞ ընտանիքի է հատկացվել միևնույն որոշմամբ նախատեսված փոխհատուցումը:
2. Ում կողմից է կազմվել տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու աշխատանքների համար նախատեսված յուրաքանչյուր տարածքի սխեմաները՝ գրաֆիկական և աղյուսակային մասերով: /Խնդրում եմ տրամադրել պատճենները/:
3. Ինչ միջոցներով է իրականացվել ՀՀ Կառավարության թիվ 317 որոշմամբ նախատեսված ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման աշխատանքները, որքա՞ն կազմել այդ գումարը է:
4. Վանաձոր համայնքի որ տարածքներն են ենթակա ժամանակավոր շինություններից ազատման, ըստ ՀՀ Կառավարության թիվ 317 որոշման:
5. Վանաձոր համայնքում ո՞ր տարածքն է հատկացվել ժամանակավոր շինություններից տարածքներն ազատելու աշխատանքներն իրականացնելու համար:
6. Վանաձոր համայնքում քանի՞ ընտանիք է բնակվում ժամանակավոր շինություններում:
7. Ոչ հիմնական շինություններում բնակվող քանի՞ ընտանիքի հետ է կնքվել ՀՀ Կառավարության թիվ 317 որոշման 6-րդ կետով նախատեսված քաղաքացիներին բնակտարածությամբ ապահովելու պայմանագիր: Խնդրում եմ տրամադրել նաև այդ պայմանագրի օրինակելի ձևի պատճենը:
8. Տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու աշխատանքները կանոնակարգելու նպատակով յուրաքանչյուր տարածքի համար կազմված սխեմայի պատճենը /ներառյալ գրաֆիկական և աղյուսակային մասերը/:
9. Ովքե՞ր են հանդիսանում ոչ հիմնական շինություններից ազատված տարածքների սեփականատերերը:

**Հարգանքներով՝**

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց





4-22-68

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

377200 Վանաձոր, Հայքի հրապարակ
E-mail: Vanadzor @arminco.com
4-45-33, 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

047/N. 3882 « 19 » հունիսի 2006թ.

Ձեր N 079/1922 առ « 08 » հունիսի 2006թ.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա
Վանաձորի գրասենյակ»
կազմակերպության նախագահ
Ա. Սաքունցին

Ի պատասխան Ձեր գրության հայտնում եմ, որ՝

1. Ոչ հիմնական շինություններում բնակվող 109 ընտանիքների տրամադրվել են բնակելի մակերեսներ (Երևանյան խճ. թիվ 90 և Ուսանողական թիվ 10 հանրակացարաններում), իսկ 104 ընտանիքի բնակարան վարձակալելու համար տրվել է ֆինանսական աջակցություն երկու տարի ժամանակով՝ յուրաքանչյուր ամիս 10 000 (տասը հազար) դրամ:

2. Վանաձոր քաղաքի Կենտրոնի մանրամասն հատակագծման նախագիծը մշակվել է «Հայնախագիծ» ՓԲ ընկերության կողմից Վանաձորի քաղաքապետարանի պատվերով 1998թ.-ին և այդ տարածքներում հողհատկացումները իրականացվել են վերոնշյալ նախագծի հիման վրա:

3. Երևանյան թիվ 90 հանրակացարանը վերկառուցվել է ՀՀ կառավարության միջոցներով և ծրագրի արժեքը կազմել է 21 760 000 դրամ:

3. Երևանյան 90 հանրակացարանի վերակառուցման շինարարական աշխատանքները մշակվել և համակարգվել են ՀՀ կառավարության կողմից:

4. Վանաձոր համայնքում «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի շրջանակներում ազատվում են թիվ 1; 2; 3; 4; 7 տնակային ավանների տարածքները, որտեղ ներկայումս կա թվով 188 տնակ՝ մասնավորապես.

թիվ 1տնակային ավան - 94 տնակ
թիվ 2տնակային պվան - 30 տնակ
թիվ 3տնակային ավան - 28 տնակ
թիվ 4 տնակային ավան - 29 տնակ
թիվ 7 տնակային ավան - 7 տնակ

5. Վանաձոր համայնքում ոչ հիմնական շինությունների համար նախատեսված է Սանկտ-Պետերբուրգի փողոցի թիվ 5 տնակային ավանը:

6. Վանաձոր համայնքում ընդհանուր առմամբ ներկայումս գոյություն ունեն 746 (յոթ հարյուր քառասունվեց) ժամանակավոր շինություններ (տնակներ), որտեղ բնակվում են ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներ:

7. Տնակային ավանների տարածքների օտարման աճուրդները տեղի են ունեցել 18.06.2002թ.-ին, 08.05.2003թ.-ին, 24.09.2003թ.-ին և 25.12.2003թ.-ին, որոնց մասին հայտարարությունները նախապես հեռարձակվել են զանգվածային լրատվության միջոցներով և տպագրվել են «Լոռու մարզ» թերթում:

8. Ընդհանուր առմամբ տնակային ավանների տարածքներից աճուրդի է դրվել և օտարվել 41 հողակտոր:

Կից Ձեզ է ներկայացվում՝

1. Տնակային ավանների բնակիչներին բնակմակերես հատկացնելու Վանաձորի քաղաքապետի որոշման ծևը.

2. Տնակային ավանների բնակիչներին ժամանակավորապես բնակելի տարածություն վարձակալելու համար նյութական աջակցություն տրամադրելու կարգադրության ծևը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կատ.՝ Գ. Սիմոնյան
հեռ.՝ 4-45-33
Կատ.՝ Գ. Պառավյան
հեռ.՝ 2-58-92



## ՀԱՎԵԼՎԱԾ 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

«___»_______200 թ. թիվ ____

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դիմք ընդունելով ____________ փողոցի թիվ _____ տնակի բնակիչ _______________ դիմումը՝ նրան ժամանակավորապես բնակելի տարածություն վարձակալելու համար նյութապես աջակցելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համաձայն ՀՀ կառավարության 01.04.2002թ. թիվ 317 որոշման

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

Վանաձորի _____________ փողոցի թիվ _______ տնակի բնակիչ _______________-ին Վանաձորի համայնքի 2006թ. բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 06 խմբի 04 ենթախմբով նախատեսված միջոցներից յուրաքանչյուր ամիս՝ մինչև բյուջետային տարվա վերջը հատկացնել 10 000(տասը հազար) դրամ:

Վճարումը կատարել ___________ թվականից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ճիշտ է՝
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ.ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

«___»_______200 թ. թիվ ____

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_________________________-ին
ԲՆԱԿՄԱԿԵՐՊԵՍ ՀԱԿՏԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիմք ընդունելով __________ փողոցի թիվ _________ տնակի բնակիչ _______________-ի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

_________________-ի ընտանիքի ___ անձին հատկացնել _______________ հասցեի թիվ _____ հանրակացարանի թիվ ____ սենյակը _____թմ բնակմակերեսով:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ճիշտ է՝
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ.ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

21 օգոստոսի, 2006

Վանաձորի ավագանու անդամ
Ս. Աղաբեկյանին

Հարգելի պրն Աղաբեկյան

Վանաձորի թիվ 1, 2, 3, 4 և 7 տնակային ավանների հողատարածքների օտարման և դրանց նպատակային օգտագործման վերաբերյալ Վանաձորի քաղաքապետարանից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերոհիշյալ տարածքներից ներկայումս օտարված է 41 հողակտոր: Քաղաքապետարանից ստացված տեղեկատվության մեջ նշվում է, որ այդ հողակտորներն օտարվել են աճուրդի կարգով, սակայն աճուրդի, դրա վերաբերյալ ավագանու կողմից կայացված որոշման, հողակտորների սեփականատերերի մասին կազմակերպության պահանջած տեղեկատվությանը քաղաքապետարանը մինչ օրս պատասխան չի տրամադրել:

Համայնքի ենթակայության տակ գտնվող դեռևս չօտարված տնակային ավանի տարածքում, ըստ քաղաքապետարանի, պիտի կառուցվեն հիվանդանոցային և սպորտային համալիրներ:

Առաջարկում եմ Ձեզ Վանաձորի ավագանու առաջիկա նիստի օրակարգում ընդգրկել և քննարկել հետևյալ հարցերը.

- Վանաձորի քաղաքապետարանից պահանջել հաշվետվություն՝ Վանաձորի տնակային թիվ 1, 2, 3, 4 և 7 տնակային ավանների օտարված հողատարածքների, դրանց օտարման նպատակով կայացած աճուրդի, օրինականության, սեփականատերերի, հողատարածքների նպատակային նշանակության օգտագործման մասին:

- Քննարկել Վանաձորի թիվ 1, 2, 3, 4 և 7 տնակային ավանների տարածքում համայնքի ենթակայության բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով հողատարածքների հատկացման հարցը, հնարավորության դեպքում տարածքների օգտագործման սխեմայում փոփոխություններ կատարելու մասին որոշման կայացման միջոցով:

Կանխավ շնորհակալ եմ՝

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

21 օգոստոսի, 2006

Լոռու մարզի դատախազ
Ա. Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան

2006թ-ի մայիս-հունիս ամիսների ընթացքում կազմակերպությանն են դիմել Վանաձորի տնակային 1, 2, 3, 4 ավանների բնակիչներ /մոտ 30 ընտանիք/:

Տնակային ավանի բնակիչները նշում են, որ 2002-2005 թթ ընթացքում իրենց տնակի զբաղեցրած տարածքներն օտարվել են, սակայն մինչ օտարումը տնակները չեն տեղահանվել: Ներկայումս օտարված հողի սեփականատերերը պահանջում են ազատել հողատարածքը, և տնակի բնակիչները մնում են անօթևան:

Կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրություններից պարզվել է, որ առանձին դեպքերում հողատարածքներն օտարվել է քաղաքապետարանի աշխատակիցներին: Մասնավորապես 2003թ. դեկտեմբերի 25-ին Վանաձորի քաղաքապետի կողմից կայացված թիվ 933 որոշմամբ Վարդանանց 4-5-1 տնակի տարածքն օտարվել է քաղաքապետարանի աշխատակից Գրիշա Պառավյանին:

Մեր կողմից ուսումնասիրություն կատարելու արդյունքում պարզվել է որ որոշ հողատարածքներ վաճառվել են առանց համայնքի ավագանու որոշման: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդված 20-րդ ենթակետի համաձայն համայնքի ավագանու լիազորությունների մեջ մտնում են նաև գույքի այդ թվում նաև հողային տարածքների օտարումը:

Չի բացառվում, որ հողատարածքները աճուրդով օտարելու ընթացքում հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտվել է, որի արդյունքում բազմաթիվ քաղաքացիներ վտարվում են իրենց ժամանակավոր կացարաններից, մնում առանց օթևանի:

Հաշվի առնելով խնդրի հրատապությունը, ընդգրկած ծավալները` խնդրում եմ հանձնարարել կատարել հետաքննություն` Վանաձորի տնակային 1, 2, 3, 4 ավանների, այդ ավանների առանձին հողատարածքների օտարման օրինականությունը պարզելու, այնուհետև մեղավոր անձանց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու նպատակով:

**Կանխավ շնորհակալ եմ`**

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

7սեպտեմբերի, 2006

Հայկական «Հաբիթաթ» բարեգործական հասարակական
կազմակերպության գործադիր տնօրեն Աշոտ Եղիազարյանին

**Հարգելի պրն Եղիազարյան**

1988թ երկրաշարժից հետո մինչ օրս Վանաձորում պահպանվել են աղետի հետևանքով ձևավորված ժամանակավոր կացարանները, մասնավորապես` տնակները, տնակային ավանները:

Անցած 17 տարիների ընթացքում ՀՀ իշխանությունները մասնակիորեն են լուծել բնակարան կորցրած կամ բնակարան չունեցող ընտանիքների բնակարանային խնդիրը` նրանց հատկացնելով բնակարաններ կամ բնակարանի գնման վկայագրեր:

Մեր կազմակերպության կողմից Վանաձորի թիվ 1, 2, 3, 4 և 7 տնակային /թվով 187 ընտանիք/ ավաններում իրականացրած ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ տնակներում դեռևս բնակվում են այն ընտանիքները, որոնք.

- ընդգրկված են եղել տարբեր հիմնարկների բնակարանի ստացման հերթացուցակում, երկրաշարժի հետևանքով կորցրել են այդ հերթը, և նրանց բնակարան չի հատկացվել:

- համարվում են երկրաշարժի հետևանքով վթարային դարձած շենքի բնակիչներ: Շենքը չի ամրացվել, այդ ընտանիքներին այլ բնակարան չի հատկացվել:

- վաճառել են իրենց բնակարանները` ելնելով սոցիալական ծանր պայմաններից:

Մեր ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս նաև, որ այդ ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանները թույլ չեն տալիս սեփական ուժերով գնել կամ կառուցել բնակարաններ: Նրանց միակ եկամուտ է հանդիսանում ընտանեկան նպաստը, կենսաթոշակը կամ ոչ կանոնանվոր ցածր վարձատրվող աշխատանքի վարձատրությունը:

2002թ.-ին ՀՀ Կառավարությնն ընդունել է «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրում ընդգրկված բնակավայրերի վերականգնման ենթակա տարածքները ոչ հիմնական շինություններից ազատելու և դրանք հեռացնելու միջոցառումների մասին» թիվ 317 որոշումը: Այդ որոշման համաձայն` Վանաձորի քաղաքապետարանը սկսել է տնակների տեղահանման գործընթացը:

Արդյունքում Վանաձորի 187 ընտանիքներ փաստացի մնում են անապաստան:

Մեր կազմակերպության կողմից տնակային ավանի բնակիչների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված քննարկումների արդյունքում մշակվել և տեղական ինքնակառավարման մարմիններին են ներկայացվել հետևյալ առաջարկությունները.

- Վանաձոր քաղաքի տնակային 1, 2, 3, 4 տնակային ավանների տարածքներից մեկում առանձնացնել հողատարածք, եթե նման հողատարածք չկա, օրենքով սահմանված կարգով փոխել հողատարածքի նպատակային նշանակությունը` տնակային ավանի բնակիչների բնակարանաշինության նպատակով /համայնքային ենթակայության բնակֆոնդի ձևավորում/:

Համայնքի ենթակայության ներքո գտնվող 42 քանդված և թալանված բնակարանները հատկացնել տնակային ավանի բնակիչներին: Այդ բնակարանները բնակության համար պիտանի դարձնելու համար ՏԻՄ բյուջեից տրամադրել հատկացումներ` 2 տարի ամսական 10 000 դրամ վարձակալության համար տնակի բնակիչներին տրվող գումարի չափով:
Վանաձորի քաղաքապետարանը նշում է, որ համայնքի բյուջեն չունի բնակարանաշինության համար անհրաժեշտ համապատասխան միջոցներ, ուստի այդ կերպ տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծումը դառնում է անհնար:

2006 թ.-ի հուլիսի 21-ին Վանաձոր համայնքի ավագանին ընդունել է «Համայնքի ենթակայության քանդված և թալանված բնակարանների հետագա տնօրինման մասին» թիվ 82-Ն որոշումը: Որոշումը սահմանում է, որ այդ բնակարնները կարող են անհատույց օգտագործման հանձնվել այն քաղաքացիներին, ովքեր կամովին պատրաստակամություն կհայտնեն դրանք բարեկարգելև համապատասխանեցնել սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին:

Տնակային ավանի բնակիչները փաստացի չունեն այդ բնակարանների վերականգնման համար անհրաժեշտ միջոցներ, ուստի զրկվում են բնակարան ունենալու այդ հնարավորությունից ևս:

Հաշվի առնելով Ձեր կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերը` խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե.

ինչպե՞ս կարող է Ձեր կազմակերպությունը աջակցել և համապատասխան միջոցներ տրամադրել տնակի բնակիչներին համայնքի ենթակայության ներքո գտնվող 42 քանդված և թալանված բնակարանների վերանորգման համար:
- ի՞նչ հնարավորություններ ունի Ձեր կազմկերպությունը և ինչպե՞ս կարող է աջակցել համայնքի ենթակայության ներքո տնակի բնակիչների համար բնակարանաշինության աշխատանքներում:

**Կանխավ շնորհակալ եմ`**

Կազմակերպության նախագահ                Ա. Սաքունց







Habitat for Humanity®
Armenia

*Building houses, building hope*

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեա
Վանաձորի Գրասենյակ
Կազմակերպության Նախագահ
Արթուր Սաքունցին

22, սեպտեմբեր, 2006

Հարգելի պրն. Սաքունց,

«Հայկական Հաբիթաթը» գործում է Հայաստանում 2000 թվականից՝ աշխատելով այն ընտանիքների հետ, ովքեր **ունեն կիսակառույց շինություն** և չունեն ուրիշ ապրելու տեղ:
Լոռու մարզում կազմակերպությունը տանիքով ապահովել է 42 ընտանիքի տեղի փորձառու աշխատակազմի և կամավորների նվիրված աշխատանիքի շնորհիվ:
2005 թվականից կազմակերպությունը վերաճեց Ազգային գրասենյակի իր երեք մասնաճյուղերով, որոնցից մեկը կենտրոնացված է Լոռու մարզում, Վանաձոր քաղաքում:
Ձեր նամակը, սույն նամակ պատասխանի հետ կներկայացվի «Հայկական Հաբիթաթի» Լոռու գրասենյակ, որտեղ համոզված եմ մասնաճյուղի խորհուրդն ու գործադիր տնօրեն՝ Ջիվան Ազարյանը կկատարեն ուսումնասիրություններ և կտան Ձեզ հետաքրքրող հարցերին բավարար պատասխաններ:

Հարգանքներով

Հայկական Հաբիթաթի
Ազգային Գրասենյակի
Գործադիր տնօրեն
Աշոտ Եղիազարյան

Aygestan 8th Street, Home 5
Yerevan, 375070
+374 (10) 55-61-14
www.hfharmenia.org





ՀԱՎԵԼՎԱԾ 11

Նախագիծ

**Բազմաբնակարան շենքերում Վանաձոր համայքի սեփականություն հանդիսացող լքված և թալանված բնակարանները որպես բնակելի տարածություն քաղաքացիներին հատկացնելու կարգը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 2006թ. հուլիսի 21-ի «Լքված և թալանված բնակարանների հետագա տնօրինման մասին» թիվ 82-Ն որոշման 2-րդ կետը, ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարմ,ան մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

Վանաձորի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել բազմաբնակարան շենքերում Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող լքված և թալանված բնակարանները որպես բնակելի տարածություն քաղաքացիներին հատկացնելու մասին կարգը համաձայն կից հավելվածի:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ծանաձոր համայնքի ավագանու

«________» _____________ 2006թ

թիվ ___________ որոշման



ԿԱՐԳ

Բազմաբնակարան շենքում Վանաձորի համայնքի սեփականություն հանդիսացող լքված և թալանված բնակարանները որպես բնակելի տարածություն քաղաքցիներին հատկացնելու

1. Սույն կարգով սահմանվում է բազմաբնակարան շենքերում Վանաձորի համայնքի սեփականություն հանդիսացող լքված և թալանված բնակարանները /այսուհետ բնակարաններ/ քաղաքցիներին հատկացնելու կարգը:

2. Սույն կարգով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով քաղաքապետի կողմից ստեղծվում է հանձնաժողով՝ Վանաձոր համայնքի ավագանու երկու անդամների և Վանաձորի քաղաքապետարանի աշխատակիցների կազմից, որը մեկամսյա ժամկետում ճշտում է բնակարանների ցանկը և այն ներկայացնում է քաղաքապետի հաստատմանը:

3. Քաղաքապետի կողմից ցանկը հաստատելուց հետո հանձնաժողովը 5-օրյա ժամկետում կազմակերպում է դրա հրապարակումը մամուլում և զանգվածային լրատվության մյուս միջոցներով: Հրապարակված հաղորդագրությունում նշվում է դիմումների ներկայացման վերջնական ժամկետը, որը չի կարող 1 ամսից պակաս լինել:

4. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված հաղորդագրության մեջ նշված ժամկետում քաղաքացիները կարող են դիմել քաղաքապետարան՝ կոնկրետ բնակարանը հատկացնելու խնդրանքով: Սահմանված ժամկետում դիմումների բացակայության կամ դրանց անբավարարության դեպքում ժամկետի երկարաձգումը կատարում է քաղաքապետը՝ հանձնաժողովի ներկայացմամբ:

5. Հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմումները՝ դիմումների ներկայացման ժամկետի ավարտից հետո 10-օրյա ժամկետում:

6. Դիմումների քննարկման արդյունքներով հանձնաժողովը քաղաքպետին է ներկայցնում որոշման նախագիծ, որտեղ նշվում է՝ որ բնակարանը ում է հատկացվում. բնակարանը դիմողի կողմից բարեկարգելու, այն սահմանված չափանիշներին համապատասխանեցնելու ժամկետը, որը չի կարող 1 տարուց ավել լինել. /այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ կհամարի հանձնաժողովը/

7. Ներկայացված նախագծի հիման վրա քաղաքապետի կողմից կայացվում է որոշում կոնկրետ բնակարանը



դիմողին անհատույց օգտագործման հանձնելու մասին, և այդ որոշմանը համապատասխան քաղաքցու հետ կնքվում է պայմանգիր:

8. Հանձնաժողովի կլողմից քաղաքցու կատարած բնակարանի բարեկարգման աշխատանքներն ընդունվելու դեպքում քաղաքապետի համապատասխան որոշմամբ բնակարանը հատկացվում է դրա բարեկարբումն իրականացրած անձին և նրա հետ կնքվում է բնակարանի վարձակալության պայմանգիր:

9. Բնակարնները հատկացվում են հետևյալ հերթականությամբ

ա) ՀՀ Կառավարության 1999թ հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղքցիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 432 որոշմանը համապատասխան կազմված` բնակարանի կարիքավորների հերթացուցակում ընդգրկված անձանց:
բ) քաղաքապետի կողմից հաստատված ցուցակի այն տնակային ավանների բնակիչներին, որոնց տարածքները ենթակա են ազատման համաձայն ՀՀ Կառավարության 2002թ. ապրիլի 1-ի թիվ 317 որոման:

10. Բնակարանների տրամադրումը կատարվում է հետևյալ կարգով`

1-սենյականոց բնակարանը` միևնույն սեռի կամ տարբեր սեռի երկու մարդուց բաղկլացած ընտանիքին, եթե երեխան ինը տարեկանից փոքր է, ինչպես նաև ամուսիններին.
2-սենյականոց բնակարանը` ինը տարեկանից մեծ տարբեր սեռի երկու մարդուց /բացի ամուսիններից/ և երեք մարդուց բաղկացած ընտանիքին.
3-սենյականոց բնակարանը` չորս-հինգ մարդուց բաղկացած ընտանիքին.
4-սենյականոց բնակարանը` վեց-յոթ մարդուց բաղկացած ընտանիքին:

11. Բնակարանները հատկացվում են հետևյալ հերթականությամբ`

ա) ՀՀ Կառավարության 1999թ. հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 432 որոշմանը համապատասխան կազմված` բնակարանի կարիքավորների հերթացուցակում ընդգրկված անձանց
բ) առաջին խմբի հաշմանդամ դարձած անձանց
գ) մանկուց հաշմանդամ ունեցող ընտանիքներին
դ) կերակրողներից մեկին կորցրած` անչափահաս երեխա ունեցող, ինչպես նաև երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին
ե) միայնակ ծերերին
զ) միայնակ մայրերին
է) որբ երեխա որդեգրած անձանց
ը) երկրորդ խմբի հաշմանդամ դարձած անձանց
թ) որոշ ծանր քրոնիկ այն հիվանդություններով տառապող անձանց, որոնք թվարկված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված հիվանդությունների ցանկում
ժ) երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված կամ անհայտ կորած ռազմիկների /պարտիզանների/ և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց ընտանիքներին
ի) պետական կամ հասարակական պարտականությունները կատարելիս կամ արտադրության մեջ դժբախտ պատահարի հետևանքով զոհված անձանց ընտանիքներին

12. Եթե նույն բնակարանի հատկացման համար դիմել են միևնույն արտոնությունից օգտվող քաղաքացիներ, ապա նախապատվությունը տրվում է առավել շուտ դիմում ներկայացրածին:

13. Ելնելով ներկայացավծ բարեկարգման աշխատանքների ծավալից և առաջարկվող պայմաններից, հաշվի առնելով բնակարանի բարեկարգման կարևորությունը, հանձնաժողովի պատճառաբանված առաջարկությամբ հատկացումը կարող է կատարվել առանց 11-րդ կետի հերթականությունը հաշվի առնելու:

14. Սահմանված ժամկետում բարեկարգումը չավարտելու դեպքում բնակարանը ենթակա է վերահատկացման, իսկ քաղաքացու կողմից կատարված ծախսերը չեն փոխհատուցվում:

15. Սույն կարգով բնակարանների տրամադրման ժամանակ երկրաշարժի հետևանքով կորցրած բնակարանների դիմաց ստացած բնակարաններ օտարած բնակիչներին հատկացումները կատարվում են վերջին հերթին` անկախ սույն կարգի 11-րդ կետով սահմանված արտոնություններից:

16. Հատկացումները չեն կարող կատարվել սույն կարգի ընդունման պահին բնակելի անշարժ գույքի սեփականություն կամ համայնքի սեփականություն հանդիսացող օգտագործման իրավունք ունեցող ոչ կարիքավոր ընտանիքին:





ՀԱՎԵԼՎԱԾ 12

## Հարցում կատարելու թերթիկ

Սույն հարցումը անց է կացվում Վանաձոր քաղաքի տնակների բնակիչների և նրանց առկա խնդիրների վերաբերյալ քաղաքացիների իրազեկման մակարդակը պարզելու համար:

Հարցումն իրականացվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող «Մեկուսացված քաղաքակրթություն» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը իրականացվում է Բաց հասարակության Ինստիտուտի օժանդակության և Համաշխարահային բանկի կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցներով:

Տեղեկություններ հարցվողի մասին:

1. Տարիքը     մինչև 18     19-45     45-60     61 և բարձր

2. Հասցեն /թաղամասը/________________________________________________________________

3. Զբաղմունքը
/խնդրում ենք կատարել1 նշում/
- ուսանող
- թոշակառու
- պետական համակարգի աշխատող
- մասնավոր համակարգի աշխատող
- հասարակական կազմակերպության աշխատող
- այլ

4. Կրթությունը
/խնդրում ենք կատարել1 նշում/
- միջնակարգ
- միջնակարգ մասնագիտական
- թերի բարձրագույն
- բարձրագույն
- այլ

5. Ըստ Ձեզ, որքա՞ն մարդ է բնակվում տնակներում և տնակային ավաններում:
_______________________________

6. Ձեր կարծիքով ի՞նչ խնդիրներ ունեն տնակների և տնակային ավանի բնակչները:
___________________________________________________________________________
___________________________________________________________________________

7. Որո՞նք են, ըստ Ձեզ, տնակների և տնակային ավանների բնակիչների խնդիրների չլուծվածության պատճառները:
- Հասարակական անտարբերություն
- պետական անտարբերություն
- համապատասխան օրենսդրության բացակայություն
- խնդիրների մասին տեղեկատվության բացակայություն
- տնակային ավանի բնակիչների պասիվություն
-այլ_________________________________

8. Ի՞նչ միջոցով եք տեղեկություն ստացել տնակների, տնակային ավանի բնակիչների և նրանց խնդիրների վերաբերյալ:
- Տեղական հեռուստատեսություն _________________________________________________________________
/նշեք, խնդրում եմ, հեռուստատեսության անվանումը/

- հանրապետական հեռուստատեսություն
- տեղական տպագիր մամուլ
- հանրապետական տպագիր մամուլ
- ռադիո
- անձնական շփումներ, խոսակցություններ
- սեփական փորձ





9. Տեղական, հանրապետական հեռուստատեսությամբ և տպագիր մամուլով իրականացվող հրապարակումները նպաստե՞լ են արդյոք տնակային ավանի բնակիչների և նրանց խնդիրների վերաբերյալ Ձեր իրազեկման մակարդակի բարձրացմանը:
- զգալի չափով
- որոշ չափով
- չեն նպաստել

10. Ձեր կարծիքով, Վանաձոր համայնքի համար կարևո՞ր են տնակներում և տնակային ավաններում բնակվողների խնդիրները:
- Այո - ոչ
եթե այո ինչո՞ւ_______________________________________________________________________
եթե ոչ ինչու՞ _______________________________________________________________________

11. Վանաձոր համայնքում ի՞նչ կառույցներ են զբաղվում տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծմամբ:
- Վանաձորի քաղաքապետարան
- Վանաձոր համայնքի ավագանի
- հասարակական կազմակերպություններ _______________________________________
/եթե գիտեք, նշեք անվանումը/
- անհատներ
-այլ _______________________
- տեղյակ չեմ

12. Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծմանն աջակցելու համար վերջին 6 ամսվա ընթացքում տեղական մակարդակով:
- հասարակական ակցիա /ցույցեր, միտինգներ, հացադուլ/
- հասարակական երկխոսություններ և քննարկումներ
- առաջարկությունների մշակում
- ուղիղ հեռուստաեթերներ
- այլ _____________________________
- տեղյակ չեմ

13. Մասնակցե՞լ են արդյոք տնակային ավանի բնակիչները այդ միջոցառումներին:
- այո - ոչ

14. Այդ մասնակցությունը որևէ ազդեցություն ունեցել է նրանց խնդիրների լուծման վրա
եթե այո ինչո՞ւ_________________________________________________________________
եթե ոչ ինչու՞ _________________________________________________________________

15. Ձեր կարծիքով կարո՞ղ է հասարակությունը որևէ ազդեցություն ունենալ տնակների և տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծման վրա:
- Այո - ոչ

եթե այո, տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանության համար կազմակերպվող ինչպիսի՞ միջոցառումների կմասնակցեք.

-հասարակական ակցիա /ցույցեր, միտինգներ, հացադուլ/
- հասարակական երկխոսություններ և քննարկումներ
- առաջարկությունների մշակում
- դրամահավաք
- այլ _____________________________

16. Մեկնաբանություններ /Ձեր կարծիքը տնակների և տնակային ավանի բնակիչների, նրանց խնդիրների մասին/:

_______________________________________________________________________________
_______________________________________________________________________________
_______________________________________________________________________________
_______________________________________________________________________________
_______________________________________________________________________________





## Հարցում կատարելու թերթիկ

Սույն հարցումը անց է կացվում Վանաձոր քաղաքի տնակների բնակիչների և նրանց առկա խնդիրների վերաբերյալ քաղաքացիների իրազեկման մակարդակը պարզելու համար:

Հարցումն իրականացվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող «Մեկուսացված քաղաքակրթություն» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը իրականացվում է Բաց հասարակության Ինստիտուտի օժանդակության և Համաշխարհային բանկի կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցներով:

Տեղեկություններ հարցմանը մասնակցողի մասին:

1. Տարիքը մինչև 18 19-45 45-60 61 և բարձր

2. Հասցեն /թաղամասը/______________________________________________________________

3. Զբաղմունքը

-ուսանող
-թոշակառու
-պետական համակարգի աշխատող
-մասնավոր համակարգի աշխատող
-հասարակական կազմակերպության աշխատող
-այլ

4. Կրթությունը

- միջնակարգ
- միջնակարգ մասնագիտական
- թերի բարձրագույն
- բարձրագույն
- այլ

5. Ըստ Ձեզ, Վանաձորի ո՞ր թաղամասում կամ ո՞ր հասցեում են գտնվում տնակային ավաններ և տնակներ:
Հասցեն ____________________________________________________________________

6. Ձեր կարծիքով, որո՞նք են տնակներում և տնակային ավաններում հայտնվելու պատճառները:

-երկրաշարժից բնակարանը կորցնելու հետևանքով
-բնակարանը վաճառելու հետևանքով
-այլ բնակավայրից տեղափոխվելու հետևանքով
-այլ _____________________________
-տեղյակ չեմ

7. Ըստ Ձեզ, որքա՞ն մարդ է բնակվում տնակներում և տնակային ավաններում:
_____________________________

8.Ըստ Ձեզ որքա՞ն է տնակներիի շահագործման ժամկետը: ___________________________________

9. Ձեր կարծիքով ի՞նչ խնդիրներ ունեն տնակների և տնակային ավանի բնակչները:

10. Ո՞րն է տնակներում և տնակային ավաններում բնակվողների հիմնական զբաղմունքը
_____________________________________________________________________________________

11. Որո՞նք են, ըստ Ձեզ, տնակների և տնակային ավանների բնակիչների խնդիրների չլուծվածության պատճառները:

-Հասարակական անտարբերություն
-պետական անտարբերություն
-համապատասխան օրենսդրության բացակայություն
-խնդիրների մասին տեղեկատվության բացակայություն
-տնակային ավանի բնակիչների պասիվություն
-այլ_____________________________



12. Ձեր կարծիքով, որոնք են տնակների և տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծման տարբերակները:

13. Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել տնակներում և տնակային ավանում բնակվողների խնդիրները լուծելու համար:
/կարող եք ընդգծել մի քանի պատասխան/

- Կառավարության որոշում
- Տեղական Ինքնակառավարման Մարմնի որոշում
- բնակարանի տրամադրում
- դրամական փոխհատուցում
- սոցիալական օգնություն
- հասարակական կազմակերպությունների կողմից աջակցության ծրագրեր
- այլ ________________________
- տեղյակ չեմ

14. Ձեր կարծիքով, Վանաձոր համայնքի համար կարևո՞ր են տնակներում և տնակային ավաններում բնակվողների խնդիրները:
-Այո - ոչ

եթե այո ինչո՞ւ______________________________________________________________________________
եթե ոչ ինչու՞ ______________________________________________________________________________

15. Ձեր կարծիքով կարող է հասարակությունը որևէ ազդեցություն ունենալ տնակների և տնակային ավանի բնակիչների խնդիրների լուծման վրա:

-Այո - ոչ

եթե այո, տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանության համար կազմակերպվող ինչպիսի՞ միջոցառումների կմասնակցեք.
-հասարակական ակցիա /ցույցեր, միտինգներ, հացադուլ/
-հասարակական երկխոսություններ և քննարկումներ
-առաջարկությունների մշակում
-դրամահավաք
-այլ ______________________________

16. Ի՞նչ միջոցով եք տեղեկություն ստացել տնակների, տնակային ավանի բնակիչների և նրանց խնդիրների վերաբերյալ:

- Տեղական հեռուստատեսություն
- հանրապետական հեռուստատեսություն
- տեղական տպագիր մամուլ
- հանրապետական տպագիր մամուլ
- ռադիո
- անձնական շփումներ, խոսակցություններ
- սեփական փորձ

17. Մեկնաբանություններ /Ձեր կարծիքը տնակների և տնակային ավանի բնակիչների մասին/:

______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________





## ՀԱՎԵԼՎԱԾ 14

ԸՍՏ ՁԵԶ, ՈՐՔԱ՞Ն ՄԱՐԴ Է ԱՊՐՈՒՄ ՏՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ /ՄԻՆՉ ԾՐԱԳԻՐԸ/




| | |
|---|---|
| 1. ՄԻՆՉԵՎ 500 | 12.2% |
| 2. 600-1000 | 9.6% |
| 3. 1000 ԵՎ ԱՎԵԼԻ | 28% |
| 4. ՇԱՏ | 11.8% |
| 5. ՏԵՂՅԱԿ ՉԵՄ | 38.4% |




ԸՍՏ ՁԵԶ, ՈՐՔԱ՞Ն ՄԱՐԴ Է ԱՊՐՈՒՄ ՏՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ /ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ/

| | |
|---|---|
| 1. ՄԻՆՉԵՎ 500 | 10.4% |
| 2. 600-1000 | 1.4% |
| 3. 1000 ԵՎ ԱՎԵԼԻ | 47.8% |
| 4. ՇԱՏ | 8% |
| 5. ՏԵՂՅԱԿ ՉԵՄ | 19.8% |

ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ Ի՞ՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՆ ՏՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ/ՄԻՆՉ ԾՐԱԳԻՐԸ, ՀԱՐՑՎՈՂՆԵՐՆ ԸՆՏՐԵԼ ԵՆ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆ/




| | |
|---|---|
| 1. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ | 38% |
| 2. ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ | 12.6% |
| 3. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ | 9.8% |
| 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ | 10.4% |
| 5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ | 9.4% |
| 6. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ | 0.4% |
| 7. ԱՄԵՆ ԻՆՉԻ | 4% |
| 8. ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ | 2.4% |
| 9. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ | 38.4% |
| 10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ | 12.2% |
| 11. ԻՐԱՎԱԿԱՆ | 0.4% |
| 12. ՏԵՂՅԱԿ ՉԵՄ | 2.6% |



ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ Ի՞ՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՆ ՏՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ / ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ, ՀԱՐՑՎՈՂՆԵՐՆ ԸՆՏՐԵԼ ԵՆ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆ/

| | |
|---|---|
| 1. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ | 54.4% |
| 2. ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԵՆԻԿ | 8.8% |
| 3. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ | 35.6% |
| 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ | 17.8% |
| 5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ | 13.8% |
| 6. ԱՄԵՆ ԻՆՉԻ | 8.6% |
| 7. ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ | 2% |
| 8.ԿԵՆՑԱՂԱՅԻՆ | 36.2% |
| 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ | 10.6% |
| 10. ԻՐԱՎԱԿԱՆ | 0.6% |
| 11. ԿՐԹԱԿԱՆ | 1.2% |
| 12. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ | 0.2% |
| 13. ՀԱՇՎԱՌՄԱՆ | 0.2% |
| 14. ՏԵՂՅԱԿ ՉԵՄ | 2.6% |




ՈՐՈ՞ՆՔ ԵՆ, ԸՍՏ ՁԵԶ, ՏՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՉԼՈՒԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ/ՄԻՆՉ ԾՐԱԳԻՐԸ, ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ, ՀԱՐՑՎՈՂՆԵՐՆ ԸՆՏՐԵԼ ԵՆ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆ/:

| | |
|---|---|
| 1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ | 16.8% |
| 2. ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ | 79.4% |
| 3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | 23.4% |
| 4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | 10.6% |
| 5. ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՊԱՍԻՎՈՒԹՅՈՒՆ | 13.4% |
| 6.ԱՅԼ | 3.2% |




ՈՐՈ՞ՆՔ ԵՆ, ԸՍՏ ՁԵԶ, ՏՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՉԼՈՒԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ/ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ, ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ, ՀԱՐՑՎՈՂՆԵՐՆ ԸՆՏՐԵԼ ԵՆ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆ/:

| | |
|---|---|
| 1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ | 8% |
| 2. ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ | 83.2% |
| 3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | 23% |
| 4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | 8.2% |
| 5. ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՊԱՍԻՎՈՒԹՅՈՒՆ | 6.6% |
| 6.ԱՅԼ | 2.8% |






ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈ՞Ր ԵՆ ՏՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ: /ՄԻՆՉ ԾՐԱԳԻՐԸ/




1. ԱՅՈ 72%
2. ՈՉ 28%

ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈ՞Ր ԵՆ ՏՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ: /ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ/




1. ԱՅՈ 81.2%
2. ՈՉ 18.8%




ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ԿԱՐՈՂ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՏՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎՐԱ/ՄԻՆՉ ԾՐԱԳԻՐԸ/:

1. ԱՅՈ 59.4%
2. ՈՉ 40.6%



## ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ԿԱՐՈՂ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՏՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎՐԱ /ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ/:

| | |
|---|---|
| 1. ԱՅՈ ԵՎ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ | 45.6% |
| 1.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՑԻԱ | 12.2% |
| 1.2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ | 17.4% |
| 1.3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ | 16.4% |
| 1.4. ԴՐԱՄԱՀԱՎԱՔ | 12.6% |
| 1.5. ԱՅԼ | 2.8% |
| 2. ՈՉ | 54.4% |




## ԵԹԵ ԱՅՈ« ԻՆՉՈՒ ԵՆ ԿԱՐԵՎՈ՞Ր /ՄԻՆՉ ԾՐԱԳԻՐԸ/

| | |
|---|---|
| 1. ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ | 18.4% |
| 2. ՀՈՂԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ | 2.2% |
| 3.ԷԼ ԱԶԱՏ ՏԱՐԱԾՔ ՉԻ ՄՆԱՑԵԼ | 0.2% |
| 4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ | 9% |
| 5. ՔԱՂԱՔԻ ՏԵՍՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ | 13% |
| 6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐ Է | 9.6% |
| 7. ՉԳԻՏԵՄ | 4.8% |
| 8. ԱՅԼ | 5.4% |
| 11.ՉԵՄ ԿԱՐՈՂ ԿՈՆԿՐԵՏ ԱՍԵԼ | 9.4% |






## ԵԹԵ ԱՅՈ« ԻՆՉՈՒ ԵՆ ԿԱՐԵՎՈ՞Ր /ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ/

| | |
|---|---|
| 1. ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ | 31.6% |
| 2. ՀՈՂԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ | 0.6% |
| 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ | 1.8% |
| 4. ՔԱՂԱՔԻ ՏԵՍՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ | 17.2% |
| 5. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ | 5% |
| 6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐ Է | 17% |
| 7. ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ | 6.6% |
| 8. ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՆԱԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ | 2% |
| 9. ՉԵՄ ԿԱՐՈՂ ԱՍԵԼ | 8.4% |
| 10. «ԹԱՍԻԲԻ ՀԱՐՑ Է» | 0.8% |
| 11. ՈՐՊԵՍԶԻ ՎԵՐԱՆԱ «ԱՂԵՏԻ ԳՈՏԻ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | 0.4% |






ԵԹԵ ՈՉ
ԻՆՉՈՒ՞
ԿԱՐԵՎՈՐ ՉԵՆ
/ՄԻՆՉ
ԾՐԱԳԻՐԸ/




| | |
|---|---|
| 1. ՈՒ՞Մ Է ՊԵՏՔ | 31.6% |
| 2. ՈՉԻՆՉ ՉԻ ՓՈԽՎՈՒՄ | 0.6% |
| 3. ԴՐԱ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՉԿԱ | 1.4% |
| 4. ՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ | 0.2% |
| 5. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ | 4.6% |
| 6. ՄԻՋՈՑՆԵՐ ՉԿԱՆ | 2% |
| 7. ՏԵՂՅԱԿ ՉԵՄ | 2.7% |

ԵԹԵ ՈՉ
ԻՆՉՈՒ՞
ԿԱՐԵՎՈՐ ՉԵՆ
/ ԾՐԱԳՐԻՑ
ՀԵՏՈ/




| | |
|---|---|
| 1. ԴՐԱ ԿԱՐԻՔԸ ՉԿԱ | 0.6% |
| 2. ՈՉԻՆՉ ՉԻ ՓՈԽՎՈՒՄ | 4.6% |
| 3. ԴՐԱ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՉԿԱ | 1.2% |
| 4. ՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ | 0.2% |
| 5.ՉԿԱ ՄՏԱՀՈԳՎԱԾՈՒԹՅՈՒՆ | 7% |
| 6. ՄԻՋՈՑՆԵՐ ՉԿԱՆ | 0.4% |
| 7. ԴԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ Է | 0.2% |
| 8. ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՂԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ | 0.2% |
| 9.ՉԵՄ ԿԱՐՈՂ ԱՍԵԼ | 2.8% |
| 10. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ | 1% |




Ի՞ՆՉ ՔԱՅԼԵՐ ԵՆ ՁԵՌՆԱՐԿՎԵԼ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ /ՄԻՆՉ ԾՐԱԳԻՐԸ/:

| | |
|---|---|
| 1. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ | 18.6% |
| 2. ՏԻՄ ՈՐՈՇՈՒՄ | 20.4% |
| 3. ԲՆԱԿԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ | 35.6% |
| 4. ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ | 28.4% |
| 5.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ | 26% |
| 6.ՀԿ-ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 14.8% |
| 7. ԱՅԼ | 8% |
| 8. ՏԵՂՅԱԿ ՉԵՄ | 18.6% |




Ի՞ՆՉ ՔԱՅԼԵՐ ԵՆ ՁԵՌՆԱՐԿՎԵԼ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԵՐՋԻՆ ՎԵՑ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ/ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ/:

| | |
|---|---|
| 1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՑԻԱ | 1.8% |
| 2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ | 24.8% |
| 3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ | 12.2% |
| 4. ՈՒՂԻՂ ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐՆԵՐ | 52% |
| 5.ԱՅԼ | 1.8% |
| 6. ՏԵՂՅԱԿ ՉԵՄ | 36.4% |



ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՆՉ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԵՆ ԶԲԱՂՎՈՒՄ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՄԲ/ ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ/:

| | |
|---|---|
| 1. ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | 39.6% |
| 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ | 22% |
| 3. ՀԿ-ՆԵՐ | 34.8% |
| 4. ԱՆՀԱՏՆԵՐ | 3.2% |
| 5.ՈՉ ՈՔ | 5.8% |
| 6. ԱՅԼ | 2% |
| 8. ՏԵՂՅԱԿ ՉԵՄ | 27.8% |




ՄԱՍՆԱԿՑԵ՞Լ ԵՆ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ /ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ/:

| | |
|---|---|
| 1. ԱՅՈ | 56% |
| 2. ՈՉ | 20.8% |
| 3. ՏԵՂՅԱԿ ՉԵՄ | 23.2% |






ՏԵՂԱԿԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼՈՎ ԻՐԱԿԱՆՑՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ ՆՊԱՍՏԵ՞Լ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՏՆԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՁԵՐ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ/ԾՐԱԳՐԻՑ ՀԵՏՈ/:

| | |
|---|---|
| 1.ԶԳԱԼԻ ՉԱՓՈՎ | 24% |
| 2.ՈՐՈՇ ՉԱՓՈՎ | 42.6% |
| 3. ՉԻ ՆՊԱՍՏԵԼ | 33.4% |






ՀԱՎԵԼՎԱԾ 15

Անկետայի համարը______

Անկետայի լրացման ամիս ամսաթիվը__________________

Տնակի գտնվելու վայրը/հասցեն/_________________

**Տնակներում ապրող բնակիչների սոցիալական, կենցաղային, առողջապահական, կրթական վիճակի ուսումնասիրման անկետա**

Տնակում բնակվելու ժամկետը ____________________

| Տնակի ընդհանուր բնակմակերեսը մ² | Տնակի կառուցվածքը | | Տնակին կից շինության առկայությունը | | **Անդամների թիվը** | **Կոմունալ հարմարությունների առկայություն** | | **Տնակի ջեռուցման հնարավորությունները** | | **Տնակում հայտնվելու պատճառը** | | **Տնակում հաշվառման առկայությունը /նշեք հաշվառման ժամկետը/** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մետաղյա | | մառան | | | սանհանգույց | | փայտե վառարան | | երկրաշարժից բնակարանը կորցնելու հետևանքով | | ժամանակավոր | |
| | փայտյա | | ավտոտնակ | | | էլեկտրաէներգիա | | էլեկտրական սալիկ | | բնակարանի վաճառք | | մշտական | |
| | քարե | | կաթսայատուն | | | ջուր | | գազօջախ | | բնակավայրի փոփոխություն | | | |
| | այլ | | այլ | | | աղբահանություն | | այլ | | նոր ընտանիք կազմելը | | | |
| | | | | | | բնական գազ | | | | այլ | | | |
| | | | | | | այլ | | | | | | | |

Անկետայի համարը___________

**Սոցիալական վիճակը**

| **Տնակի բնակիչների ընդհանուր թիվը** | | **Եկամտի հիմնական աղբյուրը/ խնդրում ենք նշել գումարի չափը/** | | **Ընտանիքում աշխատողների թիվը** | | **Իրականացվող կոմունալ վճարումները /նշել վճարվող գումարի ամսական միջին չափը/** | | **Սննդի վրա ծախսվող ամսական գումարի միջին չափը** | | **Թվարկված սննդի օգտագործման հաճախականությունը /նշել հետևյալ տարբերակներով ամեն օր, շաբաթը մեկ, ամիսը մեկ/** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| երեխաներ | | կենսաթոշակ | | մշտական | | էլեկտրաէներգիա | | հաց | | հաց | |
| մեծահասակներ | | նպաստ | | ժամանակավոր | | գազ | | կաթնամթերք | | շաքարավազ | |
| ընդամենը | | աշխատավարձ | | արտագնա | | աղբահանում | | մսեղեն | | բանջարեղեն | |
| | | այլ | | այլ | | ջուր | | մակարոնեղեն | | միրգ | |
| | | | | | | այլ | | բանջարեղեն | | կաթնամթերք | |
| | | | | | | | | միրգ | | մսեղեն | |
| | | | | | | | | այլ | | | |



Անկետայի համարը___________

Առողջական վիճակը

| Ընտանիքում հիվանդների առկայությունը և թիվը | | Հիվանդության տեսակը /խրոնիկ, ընթացիկ/, նշել հիվանդության անունը | | Հաշմանդամության խմբի առկայությունը | | Բուժսպասարկումից և դեղորայքից օգտվելու հաճախականությունը | | Հիվանդության բուժման եղանակը | | Բուժսպասարկման տեսակը | | Բուժսպասար կում իրականացնող հիմնարկը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| երեխաներ | | | | 1-ին խումբ | | ամիսը 1 անգամ | | դեղորայքային | | անվճար | | հիվանդանոց | |
| մեծահասակներ | | | | 2-րդ խումբ | | 6 ամիսը 1 անգամ | | վիրահատություն | | վճարովի /նշեք, ինչքան են գումարի չափը/ | | պոլիկլինիկա | |
| | | | | 3-րդ խումբ | | տարին 1 անգամ | | ընտանեկան պայմաններում | | | | | |
| | | | | | | այլ տարբերակ | | այլ | | | | | |



Անկետայի համարը___________

Կրթական խնդիրներ

| Դպրոցահասակ երեխաների առկայությունը | | Դպրոց հաճախող երեխաների թիվը | Դասագրքերի առկայություն | | Դասագրքերի ձեռք բերման եղանակը | | Ընտանիքում առկա ուսանողների թիվը | Ուսումնական հաստատության տեսակը | | Ուսման հիմունքները | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| թիվը | տարիքը | | ունեն բոլոր դասագրքերը | | անվճար տրամադրել է դպրոցը | | | Ինստիտուտ | | վճարովի /նշեք վճարի չափը/ | |
| | | | ունեն դասագրքերի կեսը | | դպրոցը տրամադրել է վարձակալությամբ | | | Միջին մասնագիտական կրթական հաստատություն | | | |
| | | | ունեն դասագրքերի 30 % | | գնել են սեփական ուժերով | | | Ուսումնարան | | անվճար | |
| | | | ոչ մի դասագիրք չունեն | | ձեռք են բերվել այլ միջոցներով | | | այլ | | | |



Հարգելի պարոն դատախազ

2002-2005թթ Վանաձորի քաղաքապետարանի կողմից օտարվել են Վանաձորի թիվ 1, 2, 3, 4, 5 տնակային ավանների հողատարածքները:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակին Վանաձորի քաղաքապետարանն ամբողջական տեղեկատվություն չի տրամադրում, թե ովքեր են հանդիսանում օտարված տարածքների սեփականատերերը:

Տնակային ավանի բնակիչները նշում են, որ հողերի օտարումն իրականացվել է օրենքի խախտումներով, մասնավորապես՝ իրենց տնակի զբաղեցրած տարածքներն օտարվել են, սակայն մինչ օտարումը տնակները չեն տեղահանվել: Ներկայումս օտարված հողի սեփականատերերը պահանջում են ազատել հողատարածքը:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը բավարարել է 2006թ օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Վանաձորի քաղաքապետարանի 15 հայցերը՝ տնակների զբաղեցրած տարածքներն ազատելու մասին:

2006թ հուլիսի 27-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դիմել է Ձեզ՝ հանձնարարել կատարել հետաքննություն՝ Վանաձորի տնակային 1, 2, 3, 4 ավանների, այդ ավանների առանձին հողատարածքների օտարման օրինականությունը պարզելու, այնուհետև մեղավոր անձանց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Դիմում եմ Ձեզ՝ որպես Վանաձորի քաղաքացի՝ հաշվի առնելով խնդրի կարևորությունը և օրինականության վերականգնման անհրաժեշտությունը, բարձրացված հարցի ուսումնասիրության, ընթացքի և արդյունքների վերաբերյալ հրապարակայնությունը ապահովելու համար, և ակնկալում ենք Ձեր աջակցությունը:

Անուն ______________________________

Ազգանուն ___________________________

Հասցե _______________________________

Ստորագրություն ______________________



Վանաձոր քաղաքի համայնքի ղեկավարին
և ավագանու անդամներին

Վանաձորի 1, 2, 3, 4 տնակային
ավանների բնակիչներից

## Վանաձորի տնակային ավանի բնակիչների բնականային խնդրի լուծման առաջարկություններ

Հարգելի Վանաձոր քաղաքի համայնքի ղեկավար և ավագանու անդամներ

Համաձայն «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները, և բողոքները քննարկելու մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի, խնդրում ենք ընդունել Վանաձորի տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման կապակցությամբ բնակիչների կողմից մշակված ներքոհիշյալ առաջարկությունները, միևնույն օրենքի հոդված 6-ի համաձայն՝ քննարկել այն 1 ամսվա ընթացքում, ընթացք տալ, կայացնել որոշում և տրամադրել գրավոր պատասխան:

1. Վանաձոր քաղաքի տնակային 1, 2, 3, 4 տնակային ավանների տարածքներից մեկում առանձնացնել հողատարածք, եթե նման հողատարածք չկա, օրենքով սահմանված կարգով փոխել հողատարածքի նպատակային նշանակությունը՝ տնակային ավանի բնակիչների բնակարանաշինության նպատակով: Տվյալ հողատարածքը համարվելու է համայնքային սեփականություն:

2. Կազմել թե՛ երկրաշարժից առաջ, թե՛ երկրաշարժից հետո բնակարան չունեցող քաղաքացիներին բնակարան տրամադրելու համար բնակարանաշինության նախագիծ և նախահաշիվ:

3. Ստեղծել բնակարանաշինության հիմնադրամ՝ ՏԻՄ-ի բյուջեի, պետական բյուջեի, բնակիչների հատկացումները ներառյալ:

4. Կազմել համայնքային ենթակայության տակ գտնվող 42 քանդված և թալանված բնակարանները բնակության համար պիտանելի դարձնելու նախահաշիվ:

5. Համայնքի ենթակայության ներքո գտնվող 42 քանդված և թալանված բնակարանները բնակության համար պիտանի դարձնելու համար ՏԻՄ բյուջեից տրամադրել հատկացումներ՝ 2 տարի ամսական 10 000 դրամ վաձակալության համար տնակի բնակիչներին տրվող գումարի չափով:

6. Համայնքի ենթակայության ներքո գտնվող 42 քանդված և թալանված բնակարանները հանձնել տնակային ավանների բնակիչներին հետևյալ կարգով.

- հաշմանդամ ունեցող ընտանիքներ
- 2 և ավելի երեխաներ ունեցող ծնողազուրկ ընտանիքներ
- 6 և ավելի անդամ ունեցող ընտանիքներ

7. Վերը ներկայացված առաջրկությունները ներառել ավագանու հաջորդ նիստի օրակարգում, քննարկել և որոշում կայացնել տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծման համար:

8. Մինչև տնակային ավանի բնակիչների բնակարանային խնդրի լուծումը դադարեցնել տնակների տեղահանությունը:

Կանխավ շնորհակալ ենք
Վանաձորի 1, 2, 3, 4 տնակային ավանի բնակիչներ





Ուսումնասիրության մեջ ներառնված ընտանիքների թիվը*_135__
Ուսումնասիրության իրականացման ժամանակահատվածը 1 ամիս
Տնակային ավանների հասցեները Սպանդարյան, Վարդանանց,
Շիրակացի, Նալբանդյան

## Տնակներում ապրող բնակիչների սոցիալական, կենցաղային, առողջապահական, կրթական վիճակի ուսումնասիրման անկետա

Տնակում բնակվելու ժամկետը միջինը 10 տարի

| Տնակի միջին բնակմակերեսը մ² | Տնակի կառուցվածքը | | Տնակին կից շինության առկայությունը | | Սենյակների թիվը | | Կոմունալ հարմարությունների և ծառայությունների առկայություն | | Տնակի ջեռուցման հնարավորությունները | | Տնակում հայտնվելու պատճառը | | Տնակում հաշվառման առկայությունը /նշեք հաշվառման ժամկետը/ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24,3 մ² | մետաղյա | 121 | մառան | 41 | 1 | 50 | սանհանգույց | 114 | փայտե վառարան | 133 | երկրաշարժից բնակարանը կորցնելու հետևանքով | 31 | ժամանակավոր | 19 |
| | փայտյա | 13 | ավտոտնակ | 3 | 2 | 66 | էլեկտրաէներգիա | 132 | էլեկտրական սալիկ | 1 | բնակարանի վաճառք | 22 | մշտական/փաստացի | 92 |
| | քարե | 1 | խոհանոց | 52 | 3 | 19 | հուր /ոչ տնակի ներսում/ | 107 | գազօջախ | 1 | բնակավայրի փոփոխություն | 8 | գրանցում չունեն | 24 |
| | այլ | | բաղնիք | 11 | | | աղբահանություն | 129 | այլ | | նոր ընտանիք կազմելը | 15 | | |
| | | | սանհանգույց | 57 | | | բնական լցնովի գազ | 77 | | | բնակարանի հերթը կորցնելը | 11 | | |
| | | | սենյակ | 31 | | | այլ | | | | շենքը վթարային է | 4 | | |
| | | | ոչինչ | 12 | | | | | | | ստացել են բնակարան | 5 | | |
| | | | | | | | | | | | բնակարան չունենալը | 39 | | |

* Վանաձորի քաղաքապետարանում առկա տեղեկատվության համաձայն՝ Վանաձորի Քիմիագործների թիվ 1, 2, 3, 4 և 7-րդ տնակային ավաններում կա 186 ընտանիք, սակայն իրականացված ուսումնասիրության ժամանակ հայտնաբերված ոչ բոլոր տնակներն են եղել բնակեցված:

Անկետայի համարը___________

### Սոցիալական վիճակը

| Տնակի բնակիչների ընդհանուր թիվը | | Եկամտի հիմնական աղբյուրը | | Ընտանիքի կողմից իրականացվող կոմունալ վճարումների ամսական միջին չափը | | Ընտանիքի կողմից սննդի վրա ծախսվող ամսական գումարի միջին չափը | | Թվարկված սննդի օգտագործման հաճախականությունը /նշել հետևյալ տարբերակներով ամեն օր, շաբաթը մեկ, ամիսը մեկ/ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| երեխաներ | 140 | նպաստ, կենսաթոշակ, աշխատավարձ | 3 | էլեկտրաէներգիա | 1954 | հաց | 6719 | հաց | ամեն օր |
| | | կենսաթոշակ, նպաստ, այլ եկամուտ | 2 | | | | | | |
| մեծահասակներ | 323 | կենսաթոշակ, աշխատավարձ, այլ եկամուտ | 2 | գազ | 1388 | կաթնամթերք | 1430 | շաքարավազ | ամեն օր |
| | | կենսաթոշակ, աշխատավարձ | 4 | | | | | | |
| ընդամենը | 472 | աշխատավարձ | 19 | աղբահանում | 232 | մսեղեն | 1791 | բանջարեղեն | |
| | | աշխատավարձ, օգնություն հարազատներից | 1 | | | | | | |
| | | այլ | 8 | ջուր | 45 | մակարոնեղեն | 2560 | միրգ | |
| | | անտառ | 5 | | | | | | |
| | | կենսաթոշակ | 15 | տնակի վարձ | 75 | բանջարեղեն | 2853 | կաթնամթերք | |
| | | կենսաթոշակ, աշխատավարձ, օգնություն հարազատներից | 1 | | | | | | |
| | | կենսաթոշակ, այլ եկամուտ | 3 | այլ | 280 | միրգ | 1688 | մսեղեն | |
| | | կենսաթոշակ, օգնություն հարազատներից | 1 | | | | | | |
| | | օգնություն հարազատներից | 3 | | | | | | |
| | | նպաստ, առևտուր | 2 | | | | | | |
| | | նպաստ, աշխատավարձ | 5 | | | այլ ծախսեր | 244 | | |
| | | նպաստ, անտառ | 1 | | | | | | |
| | | նպաստ, օգնություն հարազատներից | 3 | ընդամենը | 3975 | ընդամենը | 17 381 | | |
| | | և նպաստ, և կենսաթոշակ | 40 | | | | | | |
| | | նպաստ | 4 | | | | | | |
| | | եկամուտ չունի | 13 | | | | | | |
| | | Ընդամենը | 7235 դրամ | | | | | | |



Անկետայի համարը____________

## Առողջական վիճակը

| Ընտանիքում հիվանդների առկայությունը և թիվը | | Հիվանդության տեսակը /խրոնիկ, ընթացիկ/, նշել հիվանդության անունը | | Հաշմանդամության խմբի առկայությունը | | Բուժսպասարկումից և դեղորայքից օգտվելու հաճախականությունը | | Հիվանդության բուժման եղանակը | | Բուժսպասարկման տեսակը | | Բուժսպասարկում իրականացնող հիմնարկը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| երեխաներ | 27 | | | 1-ին խումբ | 6 | ամիսը 1 անգամ | 50 | դեղորայքային | 80 | անվճար | 43 | հիվանդանոց | 32 |
| մեծահասակներ | 111 | | | 2-րդ խումբ | 17 | 6 ամիսը 1 անգամ | 18 | վիրահատություն | 15 | վճարովի /նշեք, խնդրում եմ գումարի չափը/ | 50 | պոլիկլինիկա | 53 |
| | | | | 3-րդ խումբ | 8 | տարին 1 անգամ | 11 | ընտանեկան պայմաններում | 12 | | | | |
| | | | | | | ամիսը մի քանի անգամ | 16 | այլ | 3 | | | | |

Անկետայի համարը____________

## Կրթական խնդիրներ

| Դպրոցահասակ երեխաների առկայությունը | | Դպրոց հաճախող երեխաների թիվը | Դասագրքերի առկայություն | | Դասագրքերի ձեռք բերման եղանակը | | Ընտանիքում առկա ուսանողների թիվը | Ուսումնական հաստատության տեսակը | | Ուսման հիմունքները | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| թիվը | | 77 | ունեն բոլոր դասագրքերը | 38 | անվճար տրամադրել է դպրոցը | 8 | 11 | Ինստիտուտ | 6 | վճարովի /նշեք վճարի չափը/ | 8 |
| 86 | | | ունեն դասագրքերի կեսը | 10 | դպրոցը տրամադրել է վարձակալությամբ | 37 | | Միջին մասնագիտական կրթական հաստատություն | 1 | | |
| | | | ունեն դասագրքերի 30 % | | գնել են սեփական ուժերով | 2 | | Ուսումնարան | 2 | անվճար | 3 |
| | | | ոչ մի դասագիրք չունեն | | ձեռք են բերվել այլ միջոցներով | | | համալսարան | 2 | | |





**Գլուխ 1**

Աղետի գոտի, հետևանքները........................................................ 3

*Մաս 1*

Ինչու՞ էր անհրաժեշտ ծրագիրը................................................... 3

Տնակում բնակվելու իրավական և հասարակական հետևանքները........................................................................... 5

*Մաս 2*

Իրականացված միջոցառումները................................................ 8

**Գլուխ 2**

Տնակային ավանի բնակիչների շահերի պաշտպանություն........11

*Մաս 1*

Իրականացված միջոցառումների արդյունքները........................11

*Մաս 2*

**Աղյուսակներ, հավելվածներ** ...................................................... 30

